

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Լիբանան Նոր Փորձութիւններու Առջեւ

Աւելի քան երկու տարի է վեր շարունակուող լիբանանի տագնապալից վիճակը անցեալ շաբթուայ ընթացքին ենթարկուեցաւ նոր փորձութեան մը: Նոյն այն վարէն ներս, ուր 45 տարի առաջ արձակուած էր քաղաքացիական պատերազմի առաջն կայծը, վերստին դարձաւ բախումներու թատերաբեմ, որոնց ընթացքին զոհուեցան եօթը ու վիրաւորուեցան 30-է աւելի ցուցարարներ: Եթէ 45 տարի առաջ կողմերը Քրիստոնեաներն ու պաղեստինցիներն էին, այս անգամ իրար դէմ դուրս կու գային Քրիստոնեաներն ու Լիբանանցի Շիիաները:

Աւելի քան տարի մը առաջ Պէյրութի նաւահանգիստէն ներս տեղ ունեցած ահաւոր պայթումը, որուն զոհ գացին 230 քաղաքացիներ, վիրաւորուեցան հազարաւորներ ու քանդուեցաւ մայրաքաղաքի մօտ մէկ երրորդ, կը շարունակէ իր յետցնցումները՝ երկիրը հասցնելով կործանման եզրին:

Նաւահանգիստի դէպքէն ետք կարգ մը լիբանանցիներու մօտ կասկածներ յառաջացան, որ պայթուցիկ նիւթերը կը պատկանէին Իրանի Իսլամական Հանրապետութեան հովանաւորութիւնը վայելող Շիիա համայնքի «Հըզպալլա» կուսակցութեան, որ Իսրայէլի դէմ դիմադրելու պատրուակով կը շարունակէ պահել զինեալ բանակ մը, ունի իր ուրոյն հաղորդակցութեան միջոցները ու գաղտնի սպասարկութիւնները: Մէկ խօսքով ան դարձած է պետութեան մէջ պետութիւն մը: Այս երեւոյթին դէմ կը բողոքեն երկրի միւս Քրիստոնեայ եւ Իսլամ համայնքները, որոնք սակայն անկարող կը գտնուին փոխելու ստեղծուած այս իրավիճակը:

Վերջին ամիսներուն, «Հըզպալլա» փոխանակ փարատելու իր անուան շուրջ եղող կասկածները եկաւ աւելի հաստատելու զանոնք: Նաւահանգիստի պայթումը քննելու համար նշանակուած առաջին դատախազը՝ «Հըզպալլայի» սպանաւալիքներուն ենթարկուելով հրաժարեցաւ իր պաշտօնէն: Անոր յաջորդեց Թարեք Պիթար անունով երկրորդ դատախազ մը, որուն եւս կ'ընդդիմանայ նոյն շրջանակը՝ մեղադրելով որ ան կը շարժի արտաքին ուժերու պատուէրով: Պիթար ամուր մնալով կը մերժէ հրաժարիլ ու հարցաքննութեան հրաւիրած է նաւահանգիստին հետ առնչութիւն ունեցող նախարարութիւններու նախկին նախարարները:

Անցեալ շաբթուայ ընթացքին

Շար.ը էջ 6

Ռուսաստան Մէկ Միլիարտ Տոլարի Ներդրում Պիտի Կատրէ Հայաստանի Մէջ



Ընդհանուր տեսարան Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի բացման նիստէն

Հոկտեմբեր 19-ին, Երեւանի մէջ մեկնարկած Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովի ընթացքին Ռուսաստանի տնտեսական զարգացման փոխ նախարար՝ Տմիթրի Վոլվաչ յայտարարեց թէ իրենք կը ծրագրեն մօտ ապագային Հայաստանի տնտեսութեան մէջ մէկ միլիարտ տոլարի ներդրում կատարել: Ան ըսած է որ, 2021 թուականին երկկողմանի ապրանքաշրջանառութեան ծաւալները աճած են 17 տոկոսով, այդ այն պարագային, երբ համավարակի տարին 4 տոկոսի անկում գրանցուած էր: Հայ-ռուսական միջտարածաշրջանային ութերորդ համաժողովի բացման ուղերձին մէջ Հայաստանի վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան յայտարարած է որ Ռուսաստանը ոչ միայն առանցքային դերակատարում ունի տարածաշրջանի խաղաղութեան եւ կայունութեան պահպանման հարցով, այլ նաեւ կեդրոնական տեղ եւ դեր Հայաստանի տնտեսութեան մէջ:

Նիկոլ Փաշինեան ընդգծած է, որ Ռուսաստանը կը հանդիսանայ Հայաստանի հիմնական առևտրային գործընկերը:

Շար.ը էջ 5

«Քաղաքացիական Պայմանագիր» Կուսակցութիւնը Պարտութիւն Կրած Է Գիւմրիի, Գորիսի եւ Մեղրիի մէջ

Կիրակի, Հոկտեմբեր 17-ին տեղի ունեցած տեղական ընտրութիւններուն, Իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը պարտութիւն կրած է վեց համայնքներէն երեքին մէջ՝ Գիւմրի, Գորիս եւ Մեղրի:

Գիւմրիի ՏԻՄ ընտրութիւններու անցողիկ շեմը յաղթահարած է հինգ ուժ՝ «Բարասանեան դաշինքը», «Քաղաքացիական պայմանագիրը», «Զարթօնքը», «Ապրելու երկիրը» եւ Հանրապետականը: Սակայն այս ուժերէն որեւէ մէկը առանձին քաղաքային իշխանութիւն ձեւաւորել չի կրնար, քանի որ ստացած քուէներով աւագանիի 33 տեղերու կէսէն աւելին՝ 17 մանտաթ որեւէ ուժի բաժին չի հասնիր:

Թէ ով կ'ըլլայ Գիւմրիի յաջորդ քաղաքապետը եւ որ կուսակցութեանն է, այս պահուն յստակ չէ: Կ'ենթադրուի, որ քաղաքական ուժերը սկսին դաշինք կազմելու բանակցութիւններ, սակայն գոնէ այս պահուն անոնք չեն շտապեր խօսիլ այդ մասին:

Առաւելագոյն քուէն՝ ձայներու 36,59 տոկոսը ստացած «Բարասանեան դաշինքը» յետընտրական գործընթացներու վերաբերեալ մեկնաբանութիւններ չ'ընեն, քանի որ քովիտով հիւանդ կուսակցութեան քաղաքապետի թեկնածու՝ Վարդգէս Սամսոնեան 2 շաբաթ է՝ հիւանդանոցն է եւ նոյնիսկ քուէարկութեան չ'է մասնակցած: Կուսակցութիւնը, սակայն, յայտարարութիւն տարածեց, ուր ակնարկ կայ միւս ուժերու հետ համագործակցութեան մասին, բայց թէ՛ որու կամ որոնց, չեն յստակացուցած:

Մօտ 30 տոկոս քուէ ստացած իշխանական «Քաղաքացիական պայմանագիրը» եւս մեծամասնութիւն ստանալու համար պէտք է դաշինք կազմէ: Քաղաքական այս ուժի նախընտրական շտապը փակ էր, եւ լրագրողներու հեռախօսանքը անպատասխան մնացին:

Քաղաքական ուժերուն համար

Շար.ը էջ 6

Մոսկուայի Մէջ Կը Քննարկուի Ճանապարհները Բանալու Հարցերը



Փոխ վարչապետ Միքի Գրիգորեան

Հայաստանի փոխ վարչապետ Միքի Գրիգորեան գործուղուած է Մոսկուա՝ մասնակցելու Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի եռակողմ յանձնաժողովի հանդիպման: Ան լրագրողներուն ըսած է, որ պիտի քննարկուի տարածաշրջանի փոխադրային ուղիներու վերաբացման հարցերը:

«Որոշակի պատկերացումներ են ձեւաւորուել երկաթգծի մասով, նախնական համաձայնութիւն կայ, որ ապաշրջափակումը պէտք է իրականացուի ԱՊՀ երկրների կարգաւորումների պագայի շրջանակներում: Մենք պէտք է քննարկենք ճանապարհների հարցերը: Հայաստանի առաջնահերթութիւնն է փոխադրային բոլոր ուղիների ամբողջական ապաշրջափակումը», - Մոսկուա մեկնելու նախօրէին ըսած է Միքի Գրիգորեան:

Հինգ Հայ Գերիներ Եւս Ազատ Արձակուեցան

Հոկտեմբեր 19-ի երեկոյեան Պաքուէն Երեւան հասան ռազմագերիներու նոր խումբ մը: Հայ գերիները տեղափոխող օդանաւը վայրէջք կատարեց Երեւանի «Էրեբունի» օդակայանը:

Պաքուէն վերադարձող 5 գերիներն են՝ Մելս Կարապետի Ամբարդանեան, Ռաֆիկ Ռոպերթի Կարապետեանը, Ժորա Վանոյի Մանուկեան, Սեդրակ Սամուէլի Սողոմոնեան եւ Յովսէփ Ռոպերթի Մանուկեան, որոնք Ատրպէյճանի մէջ 6 տարուայ ազատագրվման դատապարտուած էին:

Հայ ռազմագերիներու վերադարձին մասնակցած է Արցախի մէջ ռուս խաղաղապահ առաքելութեան նախկին հրամանատար, զօրավար՝ Ռուստամ Մուրատովը, որու միջնորդութեամբ նաեւ Հայաստան վերադարձած են հայ ռազմագերիներու նախկին խումբերը: Այսպիսով, Ատրպէյճանէն վերադարձած գերիներու թիւը կը հասնի 113-ի՝ զինձառույցողներ եւ քաղաքացիական անձեր:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՏԻՄ Հակասական Ինդիկատորը. Յաղթանակ Պարտություններ Կամ Պարտություն Յաղթանակով

ՅԱԿՈՔ ԲԱՂԱՆԵԱՆ

Հոկտեմբերի 17-ին մի շարք համայնքներում տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններում հաղթանակ տանող կառավարող Քաղաքացիական Պայմանագիր կուսակցությունը պարտուհի է հռչակում, Գործիսում եւ Մեղրիում: ՔՊ-ն այդ համայնքներում զբաղեցրել է երկրորդ տեղը, իսկ առաջինը՝ Գործիսում եղել է Առուշ Առուշանյան դաշինքը, Մեղրիում՝ «Հանրապետություն» կուսակցությունը, Գիւմրիում՝ «Բալասանեան դաշինքը»: Այդպիսով, Գործիսում եւ Գիւմրիում ՔՊ-ն պարտուհի է փաստորէն համայնքային գործող իշխանություններին, այսինքն այդ քաղաքների աւագանիներում եղած մեծամասնություններին, իսկ Մեղրիում իրավիճակը փոքր ինչ այլ է: Ընդհանրապէս, առաւել զգայուն ընկալում է Գործիսը, որտեղ խորհրդարանի կառավարող մեծամասնությունը պարտուհի է փաստացի խորհրդարանում երկրորդ ուժի, հաշուի առնելով այն, որ Առուշ Առուշանյանը «Հայաստան» խմբակցությունն անդամ է, պատգամաւոր, թէեւ այժմ գտնուում է կալանքի տակ: ՏԻՄ ընտրություններում ստացուած պատկերը արժանանում է տարաբնոյթ մեկնաբանությունների:

Խորհրդարանական ընդդիմությունը եւ համակիրները Գործիսում իրենց ներկայացուցչի ընտրությունը գնահատում են զրեթէ համապետական ընտրությունն ռեանչի տրամաբանություններ, յայտարարելով անգամ, թէ այնտեղից կը սկսի «ազատագրական պայքարը»: Իհարկէ նոյն Սիւնիքում ՔՊ թեկնածուները յաղթել են Տեղ եւ Տաթեւ համայնքներում, սակայն Գործիսը դիտուում է առանձնապատուկ: Որքան են այդ դիտարկումները հիմնաւոր, շատ բարդ է ասել: Մի բան պարզ է, որ համապետական եւ ՏԻՄ ընտրությունները համեմատելի չեն բացարձակապէս եւ այստեղ երկար ու հեռուն տանող հետեւությունների պարագայում մեղմ ասած շատ մեծ է սխալուելու հաւանականությունը:

Գիւմրու պարագայում, Բալասանեան դաշինքը այսպէս ասած համապետական մակարդակում քաղաքական փիզոլոգիան է, յամե-

նայնդէպս հրապարակաւ: Գիւմրիում թերեւս ուշադրութեան է արժանի այլ բան, որ հանրապետություն երկրորդ քաղաքում անցողիկ շէմը յաղթահարել են ՀՀԿ-ն, նոր ստեղծուած Ապրելու երկիր կուսակցությունը, եւ խորհրդարանական ընտրություններից կարճ ժամանակ առաջ ստեղծուած Զարթօնք կուսակցությունը: Ըստ այդմ, այդ հանգամանքը ենթակայ է հանգամանալից դիտարկման, հասկանալու համար, թէ արդեօ՞ք Գիւմրու ընտրությունն պատկերում նշմարում է որեւէ տենդենց, որը կարող է ունենալ համապետական «հեռանկար»: Առաջժամ թերեւս պէտք է անել մի քանի կարեւոր արձանագրում: Նախ, այն, որ Հայաստանի խոշոր քաղաքներում ՏԻՄ ընտրությունը յաղթել է ոչ կառավարող մեծամասնությունը, վկայում է, որ երկրում այդուհանդերձ սկսել է գործել ընտրական ինստիտուտը:

Ակնառու է, որ կառավարող մեծամասնությունը չի դրել ՏԻՄ ընտրությունը, առաւել եւս խոշոր քաղաքներում ամէն գնով յաղթելու խնդիր: Եւ սա թերեւս առանցքայինն է առաւել խորքային իմաստով: Ու սա նաեւ յաջողություն է, որը կարելի է վերագրել կառավարող մեծամասնությանն էլ: Կարելի է իհարկէ դիտարկել մասնակից ուժերի առանձին քաղաքական շրջանակներ, այդ թւում կառավարող ՔՊ-ի՝ որը խոշոր համայնքներում ակնյայտորէն բաւակալան թոյլ է առանց Միկոյլ Փաշինեանի, սակայն դա թերեւս աւելի շուտ հենց կուսակցությունների խնդիրն է, հասկանալ սեփական արդիւնքի կամ ձախողման պատճառները: Հանրային, պետական մակարդակով առանցքայինն անշուշտ ընտրական ինստիտուտի կայացմանն ուղղուած հերթական քայլն է, այս դէպքում ՏԻՄ մակարդակում: Իհարկէ կարեւոր է թերեւս արձանագրել նաեւ, որ ընտրական ինստիտուտի կայացումը ենթադրում է ոչ միայն հանգամանք, երբ իշխող ուժը չի դնում ամէն գնով յաղթելու խնդիր, այլ նաեւ դրուում է որեւէ մէկի «ամէն գնով» յաղթանակ թոյլ չտալու եւ ընտրական գործընթացի օրինակաւորությունը ապահովելու գերխնդիր: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հայկական Մեդիայի Մոլորությունը

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԶԱՐԵԹԵԱՆ

Հայկական մեդիայում տեղեկություններ տարածուեցին Կասպից ծովում իրանի նաւատորմի կողմից անցկացուող վարժանքների մասին: Yerkir.am կայքը, յղում անելով ռուսալեզու տեղեկատվական ակտիվիզմի կայքէջը, գրեց, որ իրանը Կասպից ծովի ափին գտնուող յենակէտերից մեկում տեղակայել է իր «մոծակների նաւատորմը»՝ մինչեւ 4000 արագընթաց նաւ ծանր զննարկներով:

Նոյն օրը 24TV-ի «4000 իրանական նաւակներ պատրաստ են գրոհելու Կասպից ծովից» վերտառութեամբ հրատարակուած հարցազրոյցի ժամանակ իրանական «նաւատորմի» մասին խօսել էր ռազմական փորձագէտ Հայկ Նահապետեանը:

«...Հիմա չորս հազար (իրանական-խմբ.) նաւակներ գրոհաչին, որ բաւականին լուրջ ուժ ա, չորս հազար, Ատրպէյճանի պաշտօնական աղբիւրները հաստատեցին, էս պահին Կասպից ծովում ա, պատրաստ գրոհելու: Չորս հազար, պատկերացնո՞ւմ էք՝ ինչ թիւ ա», - ասել էր Նահապետեանը:

Հարկ է նշել, «Փաստերի ստուգման հարթակին» չյաջողուեց գտնել ատրպէյճանական որեւէ պաշտօնական յայտարարութիւն կամ աղբիւր, որը կը հաստատէր ռազմական փորձագէտի պնդումները:

Նահապետեանի այս յայտարարութիւնը, սակայն, շատ արագ տարածուեց սոնկ կայքերի կողմից: Նման տեղեկություն հաղորդեց նաեւ «5-րդ արկ»՝ Հոկտեմբերի 11-ի «Հայլուր» հաղորդման ժամանակ, որտեղ «նաւակները» արդէն դարձել էին «ռազմանաւեր»:

«Իրանը մէկ շաբաթ առաջ չորս հազար ռազմանաւ դուրս բերեց Կասպից ծով ու սպառնաց Պաքուին, որ թիրախաւորել է Ատրպէյճանի էներգետիկ ենթակառուցուածքները», - ասուում է «5-րդ արկ» ռեպորտաժում:

Մեզ չյաջողուեց այս տեղեկություն սկզբնաղբիւր նշուող տեղեկատվական ակտիվիզմի կայքէջում գտնել նման տեղեկություն գտնել: Մինչդեռ, նոյն անունը կրող ֆեյսբուքեան էջում եւ որոշ տեղեկատվական ակտիվիզմի կայքէջերում, այնուամենայնիւ, նման տեղեկություն տարած-

ուել էր՝ Հոկտեմբերի 5-ին: Հրապարակումներն ուղեկցուած էին կից տեսանիւթով, որտեղ էլ հենց ենթադրաբար ներկայացուած էր Կասպից ծովում իրանական «մոծակների նաւատորմը»:

Իրականում, սակայն, այդ տեսանիւթը արուել է դեռեւս 2021 թ. Փետրուարին՝ իրանի հարաւում՝ Պարսից ծոցում գտնուող Բանդար Աբբասի նաւահանգստում 340 մոտորանաւ իրանի իսլամական յեղափոխութեան պահապանների կորպուսի շահագործմանը յանձնելու արարողութեան ժամանակ, եւ որեւէ կապ չունի Կասպից ծովի հետ:

Բացի այդ, առհասարակ, վերջին անգամ իրանը զօրավարժութիւն Կասպից ծովում անցկացրել է 2021 թ. Յուլիսին, որը ստացել էր «Կայուն անվտանգութիւն. 2021» անուանումը: Դրանից յետոյ Կասպից ծովում անցկացուող որեւէ զօրավարժութեան մասին յայտարարութիւն իրանի կողմից չի արուել, եւ նման տեղեկություններ չկան իրանական մամուլում:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հայկական մամուլում տարածուող տեղեկությունները, թէ իրանը Կասպից ծովում է տեղակայել 4000 «ռազմանաւեր»՝ պատրաստ լինելով գրոհել Ատրպէյճանի վրայ, չեն համապատասխանում իրականութեանը եւ հիմնուած են միմիայն անյայտ տեղեկատվական ակտիվիզմի հաղորդած տեղեկությունների վրայ:

«ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐԹԱԿ»

ՄԱՍԻՍ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀԱՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Վանո Սիրադեղեանի Յիշատակին

ԱՐԱՍ ԱԲՐԱՎԱՍԵԱՆ

Քանի որ վերջին օրերին հրապարակուած են բազմաթիւ յիշողութիւններ Վանո Սիրադեղեանի մասին, արւում են բազմաթիւ մէջբերումներ, ես էլ յիշեմ Վազգէն Սարգսեանի գնահատականը, որը լսել եմ անձամբ. «Կարծում էք, Վանոն կարողանում է ճիշդ գնահատել մարդկանց ու երեւոյթները միայն իր ինտուիցիայի միջոցով: Սխալուում էք: Նա ուղղակի շատ է մտածում, երկար է մտածում խնդիրների մասին եւ յետոյ ընդունում է ճիշդ որոշում»:

Ինձ թւում է, պետական գործչի համար կարեւորագոյն յատկանիշներից մէկն է: Չեմ ուզում իդեալականացնել այդ գործչին,

որին, բնականաբար, երախտապարտ եմ «Առաւօտ» թերթը հիմնելու համար: Նրա գործունէութեան դրական եւ բացասական կողմերի մասին թող հետազայում խօսեն պատմաբանները: Բայց այս համատեքստում կայ մի հարց, որն այսօր արդիական է: Լեւոն Տէր-Պետրոսեանի կողքին կայացած, ինքնուրոյն մարդիկ էին, որոնցից ամէն մէկը, անկախ առաջին նախագահի անձից, իրենից առանձին արժէք էր ներկայացնում: Վազգէն Սարգսեան, Վանո Սիրադեղեան, Բաբգէն Արարքեան, Հրանդ Բազրատեան, Դաւիթ Շահնազարեան, Էդուարդ Եգորյան, Աշոտ Մանուչարեան եւ էլի շատ-շատերը՝ նրանք ամենեւին փերիններ չեն, բայց ես չեմ կարող պատկերացնել, որ նրանցից որեւէ

մէկը չասեր առաջին դէմքին այն, ինչ մտածում էր կամ հակառակը՝ ասէր այն, ինչ չէր մտածում. «չֆին» դուր գալու համար: Դա, իհարկէ, բերում էր հակասությունների, կոնֆլիկտների, պառակտումների: Բայց եկէք մտածենք՝ արդեօ՞ք պետություն համար առաւել զերադասելի է, երբ երկրի ղեկավարի կողքին մարդիկ են, որոնք ինքնուրոյն արժէք չեն ներկայացնում, այլ պարզապէս հանդէս են գալիս որպէս ֆոն՝ այդ ղեկավարի ամբիցիաների համար: Ես, յամենայնդէպս, ղեկավար պաշտօններում գերադասում եմ տեսնել վառ անհատականությունների, մտածող, նախաձեռնող մարդկանց, ոչ թէ գորշ պալատականների: Սիրադեղեանը կայացել էր որպէս գրող մինչեւ 1988 թուականը եւ վերը

ԼՈՒՐԵՐ

Ապօրինի ծագում ունեցող Գոյքի Բռնագանձման Գործերով Առաջին Հայցը Ուղարկուած է Դատարան

Մէկ տարի առաջ Գլխաւոր դատախազութեան ներս ձեւաւորուած ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով վարչութիւնը աւարտին հասցուցած է առաջին գործը եւ ուղարկած առաջին ատեանի դատարան: Խօսքը Ազգային Անվտանգութեան Ծառայութեան (ԱԱԾ) նախկին աշխատակից Սերոբ Յարութիւնեանի եւ անոր կնոջ՝ Անուշ Անտոնեանի մասին է, «Ազատութիւն»-ին հաղորդեց գլխաւոր դատախազի խորհրդական՝ Գոռ Աբրահամեան: «Ուսումնասիրութիւնը նախաձեռնուել է այն ժամանակ, երբ նրա նկատմամբ քրէական գործի շրջանակներում իրականացուած էր քրէական հետապնդում: Մասնաւորապէս կարգով, հաշուի առնելով, որ առկայ էին տուեալներ հնարաւոր ապօրինի ծագում ունեցող գոյքի վերաբերեալ, այդ տուեալներն ուղարկուել էին վարչութիւն, եւ հենց դրա շրջանակներում էլ վարչութիւնը սկսել էր ուսումնասիրութիւնը, խօսքը վերաբերուած է Ազգային անվտանգութեան ծառայութեան նախկին աշխատակցին», - ըսաւ Աբրահամեան: Դատախազութիւնը դատարանէն կը պահանջէ զնդապետէն, անոր

կնոջն ու որդիէն բռնագանձել ընդհանուր առմամբ 485 միլիոն դրամ արժողութեամբ գոյք, որոնց կարգին է Երեւանի Հիւսիսային պողոտան գտնուող բնակարանը, երկու ինքնաշարժներու կայանատեղիներ եւ քանի մը այլ սեփականութիւն: Աբրահամեանի տուեալներով, այս պահուն դատախազութիւնը կ'ուսումնասիրէ 250 անձի գոյք, մօտ 10-ը գործ կը գտնուի աւարտական փուլ: Եւ անոնց հետ այժմ բանակցութիւններ կ'ընթանան, եթէ համաձայնութիւն ձեռք բերուի, ուրեմն գործերը դատարան չեն հասնիր եւ քաղաքացիները ապօրինի համարուող իրենց գոյքի 75 տոկոսը կը վերադարձնեն պետութեան: Ապօրինի ծագում ունեցող գոյքի վերաբերեալ ուսումնասիրութիւններուն մէջ կան հնչեղ անուններ, անոնց կարգին՝ նախկին ոստիկանապետ՝ Վլատիմիր Գասպարեան, երրորդ նախագահ Սերժ Սարգսեանի եղբոր, հետախուզման մէջ գտնուող Լեւոն Սարգսեանի դուստրը, պետական գոյքի կառավարման վարչութեան նախկին պետ, Ազգային ժողովի նախկին նախագահ՝ Գալուստ Սահակեանի որդին՝ Արման Սահակեանը:

Կը Բարեկարգուի Տաթև-Աղուանի ճանապարհի Վերջին Հատուածը




«Գորիս-Կապան ճանապարհի այլընտրանքը համարուող Տաթև-Աղուանի 43 քիլոմէթրանոց ճանապարհի վերջին 8 քիլոմէթրն է մնացել, որ բարեկարգուի», երէկ՝ Հոկտեմբեր 14-ին հաղորդեց Տարածքային կառավարման եւ ենթակառուցութեան քննարկող նախարար՝ Գնել Սանոսեան: Սեպտեմբերին, երբ Հայաստանի հարաւոր Գորիս-Կապան ճանապարհի ատրպէյճանական վերահսկողութեան տակ գտնուող հատուածին ատրպէյճանցիները սկսան կանգնեցնել ու քանի մը հարիւր տոլարի հասնող ճանապարհային տուրք պահանջել իրանցի բեռնափոխադրողներէն, Հայաստանի իշխանութիւնները յայտարարեցին, որ արագ կը բարեկարգեն այլընտրանքային հողային ճանապարհը: «Այնտեղ գրեթէ 24-ժամեայ աշխատանք է տեղի ունենում, մօտ 8 քիլոմէթր հատուած է մնացել, որ կուպրապատ չէ, բայց արագ ընթացքով աշխատանքներ են ընթանում, եւ մեր նպատակն է այնպէս անել, որ եղանակային պայմանները

չխանգարեն եւ երկու շերտ ամբողջովին կուպրապատ ունենանք», - ըսաւ Սանոսեան: Վարորդները նշած են, սակայն, որ յատկապէս ձմեռնադժուար է այդ ոլորաններով բեռնափոխադրում կատարել: Սանոսեանը ընդունեց, որ յատկապէս Սատանի կամուրջ-Տաթև հատուածը, ուր 3 ոլորաններ կան, բաւականին դժուարանցանքի է՝ նշելով, որ այդ հատուածին կը նախատեսեն ճանապարհը լայնացնել: «Երէկ այնտեղ ընկերութիւններից մէկի մասնագէտները գնացին, պէտք է մասնագիտական որոշակի ուսումնասիրութիւն անեն, եւ մենք դիտարկում ենք այդ հատուածների լայնացման, որոշակի յենապատերի կառուցման միջոցառումներ ձեռնարկել, որպէսզի կարողանանք այդ խնդիրը մեղմացնել», - ըսաւ նախարարը: Կը նախատեսեն կառուցել գուգահեռ մէկ ուրիշ՝ Տաթև-Լծեն ճանապարհ, որ իր հերթին պէտք է ոլորաններ ունեցող Տաթև-Աղուանի այլընտրանքը դառնայ:

ՀԱԿ-ը Կոչ Կ'ընէ Վանօ Սիրադեղեանը Յուղարկաւորելու Կոմիտասի Պանթոնէն Ներս

Առաջին նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեանի գլխաւորած Հայ ազգային Գոնկրէսը (ՀԱԿ) կառավարութեան կոչ կ'ընէ Վանօ Սիրադեղեանը յուղարկաւորելու Կոմիտասի անուան պանթոնին մէջ՝ հաշուի առնելով «ժողովրդին նրա մատուցած ծանրակշիռ ծառայութիւնները՝ գրականութեան եւ պետական կառավարման բնագաւառներում»: Առաջժմ, սակայն, յայտնի չէ նոյնիսկ, եթէ Սիրադեղեանի աճիւնը կը տեղափոխուի Հայաստան թէ՞ ոչ: Սիրադեղեանի մահուան մասին ընտանիքի հաղորդագրութիւն տարածեց շաբաթավերջին:



Պետական գործիչ Վանօ Սիրադեղեան

Անոր մերձաւոր՝ Խաչատուր Սուքիասեանի խօսքով՝ արտասահմանի մէջ Սիրադեղեանը այլ անունով ապրած է. «Հաշուի առնելով այն հանգամանքը, որ Վանօ Սիրադեղեանը եղել է հետախուզման մէջ, Վանօ Սիրադեղեանն իր անունով չի գործել այս կամ այն երկրում: Եւ այսօր բարդութիւններ կան, որովհետեւ նրա մահից յետոյ նա այլ ձեւով է գրանցուած: Տեխնիկական, իրաւական խնդիր կայ»: «Քաղաքացիական պայմանագրի» պատգամաւոր՝ Խաչատուր Սուքիասեան կողմ է, որ գերեզման յատկացուի Կոմիտասի անուան պանթոնին մէջ՝ հայ ականաւոր գործիչներու կողքին: Սուքիասեան չի թաքցնել, որ կապի մէջ եղած է Սիրադեղեանի հետ, որուն իրաւապահները քսան տարիէն աւելի է կ'որոնեն. «Ինքը ոչ մէկից նեղացած չէր: Դա շատ մեծ արժէք է, երբ որ մարդը ոչ մէկից նեղացած չի, ուղղակի ճիշդ, սթափ գնահատում է քաղաքական բոլոր գործընթացները եւ միշտ ասում էր, որ վտանգները շատ են, մենք

փոքր երկիր ենք»: Դեռ 2018-ին՝ վարչապետ ընտրուելէն օրեր առաջ Նիկոլ Փաշինեան ըսած էր, որ իրաւական լուծումներ պէտք է գտնել Սիրադեղեանի վերադարձին համար: «Վանօ Սիրադեղեանը երկու հարց էր առաջ քաշել. ինքը չէր ընդունում, որ պէտք է գայ, եւ իրեն ձերբակալեն, նոր քննութիւններ գնան: Երկրորդը, ես ինչքան հասկացայ Հինգ Հայ Գերիներ Եւս Ազատ Արձակուեցանի մտքերից այդ ժամանակ, ինքն ուզում էր՝ յեղափոխութիւնից յետոյ այս իշխանութիւնը եւս ամբապնդուեր, նոր գար, որովհետեւ նա շատ հեռատես, շատ խոր պատկերացումներով մարդ էր: Հեռուով լինելուց տասնեակ մարդկանցից աւելի խորն է վերլուծել Հայաստանում ցանկացած գործընթաց, եւ նա հասկացել էր, որ դեռ խմորումներ կը լինեն», - նշած է Խաչատուր Սուքիասեան:

Կառավարութիւնը Յայտարարած է Մրցանիշային Քանակի Հարկ Ու Տուրք Հաւաքելու Մասին

Հայաստանի մէջ տնտեսական աճի էական դանդաղման ֆոնին՝ կառավարութիւնը յայտարարած է մրցանշային քանակի հարկ ու տուրք հաւաքելու մասին. այս տարուայ առաջին ինը ամիսներուն պետական պիւտոճէ մուտք եղած է 1 թրիլիոն 137 միլիարդ դրամ՝ այժմուայ փոխարժէքով 2 միլիարդ 358 միլիոն տոլար: Գործադիրի նիստէն յետոյ թիւերը ներկայացուց լրագրողներուն Պետական եկամուտներու կոմիտէի (ՊԵԿ) նախագահ՝ Ռուստամ Բաղասեան, որ ընդամէնը երկու ամիս առաջ նշանակուեցաւ այդ պաշտօնին: «Եթէ համեմատելու լինենք դրանք 19 թուականի Յունուար-Սեպտեմբեր եւ 2020 թուականի Յունուար-Սեպտեմբեր ամիսների հետ, ապա համապատասխանաբար կազմել են այդ մուտքերը 19-ին՝ թրիլիոն 79 միլիարդ եւ 20 թուականի՝ թրիլիոն 16 միլիարդ եկամուտները, եւ 21-ը 19 թուականի նկատմամբ աւել հաւաքագրուած գումարը կազմում է 58.1 միլիարդ կամ աճը կազմում է 5.4 տոկոս», - մանրամասնեց ՊԵԿ նախագահը: Հայաստանի 2021 թուականի պետական պիւտոճէի համաձայն՝ այս տարի կառավարութիւնը պէտք է կարողանայ հաւաքել 1 թրիլիոն 440 միլիարդ դրամ հարկ ու տուրք,

իսկ 2022 թուականին ալ աւելի շատ՝ 1 թրիլիոն 843 միլիարդ կամ այսօրուայ փոխարժէքով աւելի քան 3.8 միլիարդ տոլար: Տնտեսութեան յատկապէս ո՞ր հատուածներէն եւ ո՞ր տնտեսական ոլորտներէն կառավարութիւնը կը գանձէ կամ կը պատրաստուի գանձել այսքան գումար, արդեօ՞ք դեր ունեցած է Հայաստանի մէջ ապրանքներու ու ծառայութիւններու աստիճանի սղոթիւնը: Վիճակագրական կոմիտէի համաձայն, օրինակ, այս Սեպտեմբերին՝ անցեալ տարուայ Սեպտեմբերի համեմատ աննդամթերքը երկրին մէջ թանկացած է 15.8 տոկոսով, եւ որպէս հետեւանք՝ աւելի շատ գումար կը շրջանառուի տնտեսութեան մէջ եւ որպէս հարկ կը հոսի պետական պիւտոճէ: Եւ վերջապէս, արդեօ՞ք հարկահաւաքման նման աճը բեռ չ'ըլլար տնտեսութեան վրայ՝ դանդաղեցնելով անոր զարգացումը: «Ես սա աւելի շատ կապում եմ տնտեսական որոշակի աշխուժութեան հետ, որը վերականգնում է եւ 19 թուականի ցուցանիշներից աւելի վերել է գնում: Ինչ վերաբերում է գնաճին, միանշանակ է, որ որոշակի ազդեցութիւն ունի, բայց դա ամենեւին չի կարելի գերազանահատել, պատասխանեց Բաղասեան:

ԼՈՒՐԵՐ

Ատրպեյճան շամարոժեք Կը Պատասխանէ Սահմանազատման Հարցով Հայաստանի Դրական Քայլերուն. Ըսած է Պայրամով

Ատրպեյճանը համարժեք կը պատասխանէ Հայաստանի կողմէ երկու երկիրներու սահմաններու սահմանազատման եւ սահմանագծման հարցով ցանկացած դրական քայլի: Այս մասին յայտարարած է երկրի արտաքին գործոց նախարար՝ ձեռնարկը Պայրամովը Քաթարի իր պաշտօնակից Մուհամմէդ պըն Ապտըլ Ռահման Ալ թանիի հետ բանակցութիւններու արդիւնքները տալու ճեպագրոյցի ժամանակ:



Ատրպեյճանի արտաքին գործոց նախարար՝ ճեռիու Պայրամով

դեռ յստակ արդիւնք չէ տուած: «Այս պահուն յստակ արդիւնքներու բացակայութիւնը ցաւալի է: Կարգաւորման գործընթացը դանդաղեցնելը ճիշդ մօտեցում չէ», - ասու լիսին ըսած է Պայրամովը, նաեւ նշած, որ ի տարբերութիւն Հայաստանի՝ Ատրպեյճանը տարածաշրջանի հաղորդակցութիւններու բացման հարցով «ունի կառուցողական դիրքորոշում»:

Յայտարարելով, թէ «Ատրպեյճանը հանդէս կու գայ յետհամարտային շրջանին Հայաստանի հետ յարաբերութիւնները միջազգային նորմերու հիման վրայ աստիճանական կարգաւորման օգտին», Պայրամովը շեշտած է, թէ «չափազանց կարեւոր է, որ որքան հնարաւոր է շուտ սկսիլ երկու երկիրներու միջազգայնօրէն ճանաչուած սահմաններու սահմանազատման եւ սահմանագծման գործընթացը եւ լուծել այդ հարցերը»:

Ասոր հետ մէկտեղ պաշտօնական Պաքուն յայտարարած է, որ Հայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը

Թեհրան Կը Հերքէ Իրանցի Վարորդներու Ազատ Արձակուելու Մասին Տեղեկութիւնները

Պաշտօնական Թեհրանը կը հերքէ իրանցի երկու վարորդներու ազատ արձակուելու մասին տեղեկութիւնները:

Ատրպեյճանի իշխանութիւններու կողմէ իրանական բեռնատարներու, մէկ ամիս առաջ ձերբակալուած երկու վարորդներու ազատ արձակման մասին տեղեկութիւնները չեն համապատասխաներ իրականութեան, երկէ՛ Հոկտեմբեր 13-ին յայտարարած է իրանի Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ՝ Սաիտ Նաթիպապատէն:

ISNA գործակալութեան հաղորդմամբ՝ ան պարզաբանած է, որ «Իրանի հետ խորհրդակցութիւններէն յետոյ երկու իրանցի բան-

տարկեալներ Ատրպեյճանէն կը տեղափոխուին Իսլամական Հանրապետութիւն՝ պատիժի մնացած մասը կրելու համար»: «Այս երկու անձինք ոչ մէկ կապ ունին ձերբակալուած վարորդներուն հետ», - ընդգծած է Նաթիպապատէն՝ աւելցնելով, որ «այդ հարցի շուրջ խորհրդակցութիւնները կը շարունակուին»:

Աւելի վաղ Fars գործակալութիւնը, վկայակոչելով իր աղբիւրը, յայտնած էր, որ Ատրպեյճանի իշխանութիւնները ազատ արձակած են իրանական բեռնատարներու երկու վարորդները, որոնք մէկ ամիս առաջ ձերբակալուած են ատրպեյճանցի սահմանապահներու կողմէն Գորիս-Կապան ճանապարհին:

Մոսկուան Եռակողմ Համաձայնութիւններու Հիմնական Հոլանուոր Է. Զախարովա

«Մոսկուան հետեւողականօրէն հանդէս կու գայ Լեռնային Ղարաբաղի հարցով եռակողմ համաձայնութիւններու բոլոր դրոյթներու անշեղօրէն իրագործման օգտին», Հոկտեմբեր 14-ին, ճեպագրոյցի ընթացքին յայտարարած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ՝ Մարիա Զախարովան:

«Մենք կ'ակնկալենք, որ այս կերպ ալ կը ստեղծուին անհրաժեշտ պայմանները՝ երկկողմանի յարաբերութիւններու կարգաւորման համար, ներառեալ երկկողմանի բարդ հարցերու վերաբերեալ», - ըսած է Զախարովան:

Անդրադառնալով Մարտակերտի ատրպեյճանական դիպուկահարի կողմէ խաղաղ բնակիչի սպանութեան՝ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակը ցաւակցած է մահացողի բարեկամներուն ու մտերիմներուն եւ աւելցուցած, որ խաղաղապահ առաքելութեան հրամանա-

տարութիւնը այժմ քննութիւն կը կատարէ:

«Իրենց պատասխանատուութեան գօտիէն ներս միջադէպեր թոյլ չտալու ջանքերու համակարգման համար ռուս խաղաղապահները անընդհատ փոխգործակցութեան մէջ են Հայաստանի եւ Ատրպեյճանի Ձինուած ուժերու գլխաւոր շտաբներուն հետ: Այս ողբերգական դէպքը կ'ընդգծէ 3 երկիրներու ղեկավարներու յայտարարութեան բոլոր կէտերու անշեղ կատարման կարեւորութիւնը: Մենք կոչ կ'ընենք երկու կողմին, որքան հնարաւոր է շուտ, վերացնելու առկայ փոխադարձ գրգռիչ գործօնները մարդասիրական դաշտէն ներս, փոխանակելու զերինները «բոլորին բոլորի դիմաց» սկզբունքով եւ փոխանակելու ականադաշտերու քարտէզները լրիւ ծաւալով, - ըսած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակը:

Երեւանը Պատրաստ Է Բանակցութիւններ Սկսիլ Պաքուի Հետ. Կ'ըսէ Փաշինեան



Հայաստանի վարչապետը ելոյթ կ'ունենայ ԱՊՀ առցանց զագաթնաժողովի ընթացքին

ԱՊՀ առցանց զագաթնաժողովին Հայաստանի վարչապետը Հոկտեմբեր 15-ին յայտարարած է, թէ հիմնական հարցը Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան հասնելու համար Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի ստորագրումն է, եւ Երեւանը պատրաստ է բանակցութիւններ սկսիլ Պաքուի հետ՝ ԵԱՀԿ Մինսքի խումբի հովանիի ներքոյ:

Երկարաժամկէտ խաղաղութեան հասնելու համար, Փաշինեանի խօսքով, կարեւոր է հայ ատրպեյճանական սահմաններու սահմանագծումն ու սահմանազատումը, եւ Հայաստանը պատրաստ է սկսիլ այս գործընթացը Ռուսաստանի եւ այլ միջազգային գործընկերներու աջակցութեամբ:

«Այդ գործընթացը դժուար է սկսել, քանի դեռ ատրպեյճանական ուժերը խախտել են այդ սահմանը եւ այնտեղ մշտական հրաձգութիւն է», - ըսած է Հայաստանի վարչապետը:

Սահմանի վիճարկոյց հատուածին մէջ Փաշինեան կ'առաջարկէ տեղակայել ռուսական սահմանապահներ եւ այլ միջազգային դիտորդներ:

ԱՊՀ առցանց զագաթնաժողովին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը կրկին անգամ յայտարարած է, որ յաղթելով Յունիս 20-ի ընտրութիւններուն՝ իր ղեկավարած կառավարութիւնը ստացած է երկրի եւ տարածաշրջանի մէջ խաղաղութիւն հաստատելու մանտաթ, որ սակայն այսօր կը խոչընդոտուի շարք մը գործօններով: Այդուհանդերձ Փաշինեան ըսած է, որ գիտէ ինչպէս հասնի երկարաժամկէտ խաղաղութեան եւ փոխել տարածաշրջանի ճակատագիրը. - «Մենք ունինք յստակ պատկերացում, թէ ինչպէս հասնել այդ

նպատակին՝ երկխօսութիւն, թշնամական միջոցառում, աստիճանական յաղթահարում, տարածաշրջանային փոխադրային եւ տնտեսական բոլոր հաղորդակցութիւններ իր արդարեւ զարգացում: Սա է այս նպատակին հասնելու միակ ճանապարհը»:

Փաշինեան այսօր գործընկերներուն տեղեկացուց, որ եռակողմ աշխատանքային խումբի ծիրէն ներս աշխատանք կը տարուի փոխադրային բոլոր հաղորդակցութիւններու բացման ուղղութեամբ, եւ յոյս յայտնեց, թէ յստակ արդիւնքներու կը հասնին մօտ ապագային: Սա կը նշանակէ, որ Հայաստան կ'ունենայ ինքնաշարժներու յատուկ ճանապարհային եւ երկաթուղազծային կապ Ռուսաստանի, երկաթուղազծային կապ իրանի հետ, իսկ Ատրպեյճանը կ'ունենայ երկաթուղազծային կապ Նախիջեւանի հետ Հայաստանի տարածքով:

Բայց պաշտօնական Երեւանը պնդած է, որ քաղաքական եւ տնտեսական առաջխաղացման համար անհրաժեշտ է կարգաւորել մարդասիրական հարցերը, մասնաւորապէս՝ զերիններու հարցը:

Իր խօսքի զգալի մէկ մասը Փաշինեան նուիրած էր ԱՊՀ-ի գործերուն, մինչդեռ Ատրպեյճանի նախագահը իր խօսքը ամբողջութեամբ նուիրած էր, իր ձեւակերպմամբ՝ «յետհամարտային իրավիճակին»՝ շեշտելով, թէ Ղարաբաղեան հակամարտութիւն այլեւս գոյութիւն չունի. - «Ղարաբաղեան հակամարտութիւնը այլեւս գոյութիւն չունի, քանի որ Ատրպեյճանը ռազմական եւ քաղաքական ճանապարհով վերականգնած է իր տարածքային ամբողջականութիւնը»:

Ատրպեյճան Զօրավարժութիւններ Կը Կատարէ Լաչինի Սէջ

Ատրպեյճանական բանակը զօրավարժութիւններ կը կատարէ Արցախի բռնազրաւուած Քաշաթաղի շրջանի՝ Բերձորին մէջ: Հաղորդած են ատրպեյճանական լրատուական միջոցները՝ վկայակոչելով երկրի պաշտպանութեան նախարարութեան:

«Համաձայն 2021 թուականի ցամաքային զօրքերու պատրաստութեան ծրագրին՝ Հոկտեմբեր 19-ին Լաչինի մէջ մեկնարկած են ատրպեյճանական բանակի հրամանատարական շտապային զօրավար-

ժութիւններ», - ըսուած է պաշտօնական հաղորդագրութեամբ:

Զօրավարժութիւնները կը կատարուին կապի եւ տեղանքի կողմնորոշուելու տարատեսակ միջոցներու լայնամաշտապ կիրառմամբ:

«Զօրավարժութիւններու ընթացքին կը ստուգուի ցամաքային զօրքերու եւ զօրքերու տեսակներու փոխգործակցութիւնը՝ կառավարման ժամանակակից մեթոտներու կիրառմամբ», - նշուած է հաղորդագրութեամբ:

Հայաստանն ու Հնդկաստանը Նոր Մակարդակի Պիտի Բարձրացնեն Համագործակցութիւնը Պաշտպանական Ոլորտին Մէջ. Միրզոյեան



Հայաստանի ու Հնդկաստանի արտաքին գործոց նախարարները՝ Երեւանի մէջ կայացած մամուլի ասուլիսի ընթացքին

«Հայաստանն ու Հնդկաստանը քայլեր են ձեռնարկելու պաշտպանական ոլորտում երկկողմանի համագործակցութիւնը նոր մակարդակի բարձրացնելու համար», Երեւանի մէջ Հնդկաստանի Արտաքին գործոց նախարար՝ Սուպրամանյան ձայնաբերի հետ համատեղ ասուլիսի ժամանակ յայտարարեց Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավար՝ Արարատ Միրզոյեան:

Հայ-հնդկական յարաբերութիւնները սկսած նկատելիորէն աշխուժանալ յատկապէս 44-օրեայ պատերազմէն յետոյ, երբ Փաքիստանը, որ շարք մը հարցերով Հնդկաստանի հետ հակամարտութեան մէջ է, Ատրպէյճանին ցուցաբերեց դիւանագիտական եւ ռազմական աջակցութիւն:

Արտաքին գործոց նախարարներ՝ Միրզոյեանն ու ձայնաբերը հանդիպած էին ընդամէնը մէկ ամիս առաջ՝ Սեպտեմբեր 16-ին Տուշանպէի մէջ, եւ ահա կարճ ժամանակ անց միջուկային տէրութիւն հանդիսացող Հնդկաստանի Արտաքին գործոց նախարարը Երեւան է՝ երկկողմանի դիւանագիտական յարաբերութիւններու գրեթէ երեսունամեայ պատմութեան ընթացքին առաջին անգամ այցելելով Հայաստան:

«Այս տարի մեր դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման 30-ամեակն է լրանում, յոբելեան է, եւ մենք պէտք է միասին քայլեր ձեռնարկենք՝ քաղաքական, տնտեսական, պաշտպանական, մշակութային ոլորտներում մեր յարաբերութիւնները նոր մակարդակի բարձրացնելու համար: Մեր համագործակցութիւնը միջազգային կազմակերպութիւններում եւս կը շարունակի խորանալ, փոխադարձ աջակցութիւնը՝ ամրապնդուելը», - հնդիկ պաշտօնակիցի հետ համատեղ ասուլիսի ժամանակ ըստ Միրզոյեան:

Ան Հնդկաստանը անուանեց Հայաստանի կարեւորագոյն գործընկերներէն մէկը, որու հետ համագործակցութեան հետագայ ամրապնդումը Երեւանի առաջնահերթութիւններու շարքին է, եւ որ կրնայ իր ներդրումը ունենալ Հարաւային Կովկասի խաղաղութեան ամրապնդման գործով:

«Երէկ ու այսօր արդիւնաւէտ հանդիպումներ ունեցած ենք իմ գործընկերոջ հետ: Համապարփակ դիտարկեցինք մեր երկկողմանի յարաբերութիւնները, քննարկած ենք տարածաշրջանային եւ բազմակողմանի հարցեր եւ, որ ամէնէն կարեւորն է, համաձայնեցանք ապագայ համագործակցութեան եւ տարբեր մակարդակներով փոխադարձ այցելութիւններու ճանապարհային քարտէզին շուրջ», - ըստ ձայնաբերը:

Հնդկաստանի Արտաքին գործոց նախարարի խօսքով, մինչ քաղաքական եւ մշակութային ոլորտներուն մէջ երկկողմանի յարաբերութիւնները ամրապնդուած են, հնարաւորութիւն կայ ամրապնդելու նաեւ տնտեսական կապերը:

«Մեզ անհրաժեշտ է կատարելագործել մեր տնտեսական յարաբերութիւններն այնպէս, որ դրանք նպաստեն մեր երկրներում մրցունակ տնտեսութիւնների զարգացմանը: Ասուածի համաթեքսթում կարեւոր ենք համարում մեր տնտեսութիւնների հետագայ մերձեցումն ու փոխադարձ համարկման, որը պէտք է հիմնուած լինի ապրանքների, ծառայութիւնների, աշխատուժի եւ դրամադրութիւնի ազատ տեղաշարժի վրայ», - եզրափակած է գործադիրի ղեկավարը:

Մէկ Միլիառ Տոլարի Ներդրում

Շարունակուած էջ 1-էն

Շեշտելով, որ 2019 թուականին երկկողմանի առեւտրային շրջանառութիւնը գերազանցած է 2.0 միլիարդ տոլարի շեմը, իսկ այս տարի արդէն արձանագրած են առեւտրային շրջանառութեան երկնիշ ճաճ, Փաշինեան տեղեկացուցած է, որ Ռուսաստանը նաեւ առաջատար է Հայաստանի մէջ կատարուող ներդրումներու առումով եւ բացառիկ դերակատարում ունի Հայաստանի ենթակառուցվածքային զարգացման գործով:

Հայաստանի կառավարութեան ղեկավարը վերջերս կատարուած ներդրումներէն մասնաւորապէս առանձնացուցած է համավարակի

դէմ պայքարի պայմաններուն Հայաստանի համար Սփութինիկ Լայթ պատուաստի թողարկման նպատակով արհեստագիտական փոխադրութեան իրագործումը:

«Մեզ անհրաժեշտ է կատարելագործել մեր տնտեսական յարաբերութիւններն այնպէս, որ դրանք նպաստեն մեր երկրներում մրցունակ տնտեսութիւնների զարգացմանը: Ասուածի համաթեքսթում կարեւոր ենք համարում մեր տնտեսութիւնների հետագայ մերձեցումն ու փոխադարձ համարկման, որը պէտք է հիմնուած լինի ապրանքների, ծառայութիւնների, աշխատուժի եւ դրամադրութիւնի ազատ տեղաշարժի վրայ», - եզրափակած է գործադիրի ղեկավարը:

Ատրպէյճանական Կողմը Կրակ Բացած Է Երասխ Գիւղի Եւ Հայկական Դիրքերու Ուղղութեամբ



«Ատրպէյճանական զինուած ուժերը կրակ են բացել Արարատի մարզի, մասնաւորապէս՝ Երասխ գիւղի եւ այդ հատուածում տեղակայուած հայկական դիրքերի ուղղութեամբ այսօր՝ ժամը 15:00-ի սահմաններում», անցեալ Ուրբաթ հաղորդած է Պաշտպանութեան նախարարութիւնը:

Այդ կրակոցներու հետեւանքով այրած են գիւղի բնակիչներէն մէկուն անամնագոմը եւ խոտի դէզերը, նշած է Հայաստանի պաշտպանական գերատեսչութիւնը: Ըստ այդ հաղորդման՝ ԶՈւ անձնակազմի եւ քաղաքացիական բնակչութեան մէջ տուժածներ չկան:

Ատրպէյճանական կողմը այս մասին դեռ հաղորդագրութիւն չէ տարածած:

Յիշեցնենք, որ լարուած էր իրադրութիւնը նաեւ արցախ-ատրպէյճանական շփման գծին վրայ:

Արցախի պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդեց, որ ատրպէյճանական զինուած ուժերը Հոկտեմբեր 14-ի երեկոյեան կրակ բացած են Արցախի արեւելեան սահմանագծի տեղակայուած Պաշտպանութեան բանակի մարտական յենակետի ուղղութեամբ, որու հետեւանքով հրազէնային վիրաւորում ստացած է 6 զինձառայող:

Կէսգիշերէն քիչ անց հաղորդուեցաւ, որ իրավիճակը շփման գիծի ողջ երկայնքով կայունացած է, հայկական կողմը դիրքային ու տարածքային կորուստներ չունի:

Հաագայի Դատարանը Սկսած Է «Հայաստան Ընդդէմ Ատրպէյճանի» Գործի Քննութիւնը



ՄԱԿ-ի Արդարադատութեան Միջազգային Դատարանէն ներս մեկնարկած են Հայաստանի պահանջի հարցով Ատրպէյճանի դէմ հրատապ միջոցներ կիրառելու լուծումները:

Հայաստանը կը խնդրէ դատարանէն կիրառել շարք մը հրատապ միջոցներ, անոնց կարգին՝ ռազմավարի պոլարակի փակումը եւ ռազմագերիներու ու պահուող քաղաքացիական անձերու վերադարձը: Լուծումները պիտի կայանան Հոկտեմբեր 14-15-ին:

Հայաստանի կողմէ լուծումներուն համար կազմաւորուած է խումբ, ուր ներառուած են նաեւ միջազգային յայտնի փորձագէտներ, որոնք պիտի օգնեն ներկայացնել Հայաստանի շահերը:

Միւս կողմէ, Ատրպէյճան եւս Հաագայի դատարանէն կը պահանջէ Հայաստանի նկատմամբ միջանկեալ միջոց կիրառել: Պաշտպանական Պաքուն ՄԱԿ-ի միջազգային դատարանէն կը պահանջէ շտապ կարգով Երեւանի

նկատմամբ միջանկեալ միջոցներ կիրառել՝ «Հայաստանի սպառնալիքներէն Ատրպէյճանը պաշտպանելու համար»:

Հաագայի դատարանէն ներս Հայաստանի դէմ ներկայացուած հայցի քննութեան ընթացքին, նման յայտարարութեամբ հանդէս եկած է Ատրպէյճանի պաշտօնական ներկայացուցիչ՝ էլնուր Մամետովը:

«Հայաստանը այսօր ալ կը շարունակէ տասնամեակներ առաջ մեկնարկած ցեղային զտման քաղաքականութիւնը: Հայաստանը կը շարունակէ ատրպէյճանցիներուն նկատմամբ ատելութիւն սերմանել եւ բռնութիւն հրահրել՝ պատասխարելով զինուած խմբաւորումները ինչպէս նաեւ աջակցելով ու ֆինանսաւորելով պատեղեկատուական գործողութիւնները», - յայտարարած է Մամետովը:

Լուծումներու ավարտին դատարանի նախագահը յայտարարած է, որ որոշումը կը հրապարակուի հնարաւորինս սեղմ ժամկէտով:

Ֆրանսահայ Մեծանուն Գեղանկարիչներ Գառզուի Եւ Ժանսեմի Գործերը Երեւանի Մէջ Կը Ցուցադրուին Մէկ Հարթակի Վրայ



Եւրոպական ժառանգութեան օրերու շրջածիրէն ներս, Հոկտեմբեր 17-24-ը «Աւնօ Պապաճանեան» համերգասրահին վերաբացուած ճեմասրահներուն մէջ տեղի պիտի ունենայ «Հայաստան-Ֆրանսա, մշակութային երկխօսութիւն» խորագրով ցուցահանդէսը:

Արուեստասէրներուն պիտի ներկայացուին համաշխարհային ճանաչում ունեցող ֆրանսահայ անուանի գեղանկարիչներ Գառզուի (Գառնիկ Զուլումեան) եւ Ժանսեմի (Յովհաննէս Մեմբրեան) գծանկարչական աշխատանքները:

Ցուցադրութեան պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր 17-ին: Ցուցահանդէսին բացման ելուցթով պիտի մասնակցի «Քատանս» համույթը:

Երեկոյին ընթացքին պիտի

հնչեն Շառլ Ազնաւուրի, Ժորժ Գարուարենցի, Միշէլ Լէօկրանի, Արամ Խաչատրեանի, Աննօ Պապաճանեանի, Ռիչըրտ Կալիստոյի, Ասթոր Փիացոլայի եւ այլ երգահաններու ստեղծագործութիւնները:

Ցուցահանդէսի փակման պիտի յաջորդեն Ղազարոս Սարեանի անուան լարային քառեակի եւ Լիլիթ Զաքարեանի (դաշնամուր) ելուցթները:

Նախագիծը կ'իրականացուի ՀՀ ԿԳՄՄ նախարարութեան, Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպանութեան եւ Երեւանի ժամանակակից արուեստի թանգարանի համագործակցութեամբ:

Լիբանան Նոր Փորձութիւններու Առջեւ

Շարունակուած էջ 1-էն

«Յրգպալլայի» ու Շիիա միւս կուսակցութեան «Ամալ» շարժումի հազարաւոր կողմնակիցներ փողոց դուրս եկած էին, ուղղուելու համար դէպի արդարադատութեան նախարարութիւն եւ հոն պահանջելու դատախազի հրաժարականը: Ցուցարարները փոխանակ գլխաւոր ճանապարհներով շարժելու դէպի հանրահաւաքի վայրը, սկսած էին քալել մեծամասնութեամբ Քրիստոնեայ ներքին բնակելի թաղամասերէն, արձակելով նաեւ գրգռիչ բացականչութիւններ: Ճիշդ այդ պահուն շէնքերու տանիքներէն անձամօքներ սկսան կրակել ցուցարարներուն վրայ, որոնք ստիպուած եղան դիմել փախուստի:

Այս ծանր դէպքը բնականաբար եկաւ սարսափ ու մտահոգութիւն յառաջացնելու ժողովուրդի մօտ ու քաղաքացիական ակտիւ պատերազմի տեսարանները պարզուեցան բոլորի յիշողութեան մէջ:

«Յրգպալլա» եւ «Ամալ» կ'ամբաստանեն «Լիբանանեան Ուժեր» Քրիստոնեայ կուսակցութիւնը խաղաղ ցուցարարներու վրայ կրակելու մէջ: Այս վերջինը կը մերժէ այդ ամբաստանութիւնները ու կը յայտարարէ, որ կրակողները շրջանի բնակիչներն են,

որոնք ուզած են պաշտպանել իրենց թաղամասերը՝ զինեալ ցուցարարներու սպառնալից կոչերուն ի տես:

Դէպքի վայրէն նկարահանուած պատկերները եւս եկան հաստատելու թէ, ցուցարարներուն մէջ կային զինեալներ, որոնք անմիջապէս սկսան պատասխան կրակ արձակել բնակելի շէնքերուն ուղղութեամբ:

Լիբանանեան բանակը իր ազդու միջամտութեամբ առայժմ կը կարողանայ հսկողութեան տակ պահել իրավիճակը, իսկ հակամարտող կողմերը կը խուսափին երկիրը տանիլ նոր ցնցումներու: «Յրգպալլայի» համար ձեռնտու չեն լայն մաշտապի բախումները, նկատի ունենալով որ, ան երկրի բոլոր լծակներուն տիրապետող միակ ուժն է՝ շնորհիւ իր ձեռքին ունեցած զէնքին: Իսկ հակառակորդ կողմը առայժմ չունի բաւարար ուժ, դիմացինին հետ սուր առճակատումի երթալու:

Այսպիսով, կը շարունակուին կուտակուիլ Լիբանանի տնտեսական, ընկերային, քաղաքական ու այժմ այլ ապահովական տագնապները, որոնցմէ դուրս գալու յոյսերը օրէ-օր կը նուազին ու ժողովուրդը կը մնայ իր բախտին:

«ՄԱՍԻՍ»

«Քաղաքացիական Պայմանագիր»

Շարունակուած էջ 1-էն

կուտակներ կրնայ դառնալ 10 տոկոսէն աւելի քուէ ստացած եւ երրորդ տեղը զբաղած «Զարթօնք ազգային քրիստոնէական» կուսակցութիւնը: Քաղաքացիական թեկնածու՝ Վարդեան Յակոբեան յստակ չկարողացաւ ըսել քաղաքական ո՞ր ուժի հետ դաշինք կը կազմէ՝ հասկնալով, որ իրենց 10 տոկոս քուէն վճարողը է առաւելագոյն քուէ ստացած քաղաքական 2 ուժերու համար:

Քաղաքային իշխանութեան մաս կը կազմէ նաեւ 3 տարի առաջ՝ լեղափոխութենէն յետոյ իշխանութենէն հեռացած Հանրապետական կուսակցութիւնը, որ այժմ ստացած է 5 տոկոսէն քիչ մը աւելի ձայն: Ընդդիմադիր կուսակցութեան ցուցակը գլխաւորող Արտեմ Դուկասեան «Ազատութիւն»ին հաղորդեց, որ դաշինք կազմելու առաջարկներ չեն ստացած դեռ, բայց բացառեց իշխող «Քաղաքացիական պայմանագրի» հետ դաշինքը:

Գործիսի մէջ նախնական տուեալներով յաղթած է գործող համալսարանի Առուշ Առուշանեանի առաջնորդած ուժը: Առուշանեան այժմ կալանքի տակ է ընտրական խախտումներու մեղադրանքով եւ քարոզարշաւին չէ մասնակցած:

Մեղրիի մէջ յաղթած է Արամ Սարգսեանի գլխաւորած «Հանրապետութիւն» կուսակցութիւնը:

Ընտրութիւններու վերջնական արդիւնքները կը հրապարակուին այս կիրակի եւ այդ օրն ալ ընտրատարած քայլին յանձնաժողովը կը յստակացնէ, թէ որ քաղաքական ուժը քանի մասնաթիւ կը ստանայ Հայաստանի մեծութեամբ երկրորդ քաղաքին մէջ:

ՇԱՐԱԹ

Նախաձեռնութեամբ՝

Մամիա

ՇԱՐԱԹԱՔԵՐ

Տօթ. Արշակ Գազանճեան

ՄԵՐ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ

Ազգային Մտորումներ ու Կեցուածքներ

Գիրքը կը ներկայացնէ՝

Իրաւաբան Ռուբէն Աւշարեան

«Տօթ. Արշակ Գազանճեան այն հազուադէպ ազգային-հասարակական գործիչներէն է որ տասնամեակներու վրայ երկարող իր քաղաքական եւ գաղափարական աշխատանքները միշտ բնորոշուած են հաւասարակշռած կեցուածքներով եւ լուրջ ու չափաւոր արտայայտութիւններով:»

Հինգշաբթի, Նոյեմբեր 18, 2021

Երեկոյեան ժամը 7:30-ին

ՀԿԲՄ Կեդրոն

1060 North Allen Avenue, Pasadena, CA 91104

Մենք ենք Մեր Ամենն Առաջին Ձեռքը

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԻԹԵԱՆ

Հայկական «Ազատութիւն» հեռուստեսիլի կայանէն սփռուած հարցազրոյցի մը ընթացքին, նորանկար

Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի գլխաւոր խորհրդականի դերով այն ատեն գործող ժիրալայր Լիպարիտեան վերլուծելով անցեալ տարուան պարտութիւնը՝ ըսաւ, թէ պատասխանատուութիւնը ընդհանուր է, եւ թէ երբ Թուրքիա իր պաշտպանութեան նախարարին բերնով կ'ըսէր պատերազմին քանի մը ամիս առաջ, որ իրենք կողմ են դարաբաղեան հարցը ուժով լուծելուն, մենք մտիկ ընել չուզեցինք եւ «դիւանագիտութիւնը մէկտեղ դրինք»: Ըսաւ նաեւ, թէ որեւէ երկիր Ազգայնականի դէմ չբողոքեց պատերազմը սկսած ըլլալուն համար, եւ թէ որեւէ երկիր Ղարաբաղի անկախութիւնը ընդունելու տրամադիր չէր ու ոչ ալ պիտի ըլլայ ասկէ ետք: Վերջապէս, բացառաբար Ալիեւի տրամադրութիւնները, ըսաւ, թէ հայերը Արցախի մէջ կ'ունենան իրաւունքներ նման այն իրաւունքներուն, որ հայերը ունին Թուրքիոյ մէջ՝ դպրոց, եկեղեցի եւ այլն, ու եթէ Ռուսիա որոշէ քաշուիլ եւ դուրս գալ Ղարաբաղէն, առաջարկեց երկրորդ ծրագիր մը ունենալ եւ լեզու գտնել Ազգայնականի ու Թուրքիոյ հետ...: Այդ ծրագիրը պէտք է ըլլայ, ըստ իրեն, բանակցիլ Ազգայնականի ու Թուրքիոյ հետ՝ Արցախի քաղաքական ապագան կարգաւորելու համար:

Լեւոն Տէր Պետրոսեանի «գիշորական» քաղաքականութեան ներկայացուցիչը մուսայ ապագայ մը տեսնելով կը յանձնարարէ, թէ պէտք է բանակցիլ եւ պէտք է փորձենք պահել մնացածը՝ այն որ պատերազմին ետք մեզի մնաց Արցախէն: Հմուտ, փորձառու քաղաքական դիտորդին «իրապաշտութեամբ լեցուն» մեկնաբանութիւնները մարդս կը մղեն խորհելու, թէ ի՞նչ կարելի է ստանալ բանակցութեամբ, երբ անհաւասար են ուժերը եւ մեր դէմ դիզուած են աշխարհի նենգ շահերը:

Ժամանակին, Պաղեստինի Եասէր Արաֆատը ՄԱԿ-ի ամպիոնէն, ձիթեղի ճիւղը ձեռքին բռնած աշխարհին առջեւ, իսրայէլի առաջարկեց բանակցութեանց ճամբով լուծել իրենց տարակարծութիւնները, եւ իր յաջողները տակաւին կը փորձեն այդ ընել զօրաւորի դիրքերու մէջ նստած իսրայէլի հետ:

Եւ մինչ Լիպարիտեանի հարցազրոյցին իրապաշտ թուող սակայն յուսալքող յայտարարութիւնները առցանց կը կատարուին, Փաշինեանի իշխանութիւնը եռուզեռի մէջ կը թուի ըլլալ՝ դիւանագիտական աննախընթաց հանդիպումներով լսելի դարձնելու Հայաստանի եւ հայութեան խօսքը:

Հայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանը Թեհրանի մէջ կը հանդիպի իրանի իր պաշտօնակիցին հետ՝ Հայաստան-իրան յարաբերութիւնները ամրապնդելու համար: Հայաստանի ենթակառուցներու նախարար Գնէլ Սանտսեանը Երեւանի մէջ կը հանդիպի Հնդկաստանի դեսպանին հետ՝ մշակելու համար Հայաստան-Հնդկաստան համագոր-

ծակցութիւնը: Վարչապետ Ն. Փաշինեան Երեւանի մէջ կը հանդիպի Ֆրանսոֆոնի համաշխարհային մարմինի ներկայացուցիչին հետ՝ անոր աջակցութիւնը ապահովելու համար յետպատերազմեան մարդասիրական պէտքերը հոգալու, եւ Ռուսիոյ ու Վրաստանի դեկավարներուն հետ անընդհատ կը հանդիպի կամ կը խօսի՝ Հայաստանի անվտանգութիւնը ապահովելու համար: Նմանօրինակ նպատակներով իտալիա այցելեցին Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանն ու ամենայն հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը՝ մասնակցելու ժողովներու եւ հանդիպումներու, որպէսզի վիրաւոր հայութեան խօսքը լսելի դարձնէին: Նախագահ Արմէն Սարգսեան յաճախ ունեցած գոտեպնդիչ իր ելոյթներով յոյս եւ եռանդ կը ներշնչէ մեզի: Հոռմի ազգային Լեւոնեան գոլէճին մէջ իտալիոյ հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ իր ունեցած հանդիպումին ընթացքին յարգելի նախագահը ըսած է, թէ «Հայութիւնը ունի մէկ բնական հարստութիւն եւ այդ է հայութիւնը: Հայաստանի համար այդ կը կոչուի Սփիւռք, եւ Սփիւռքի համար այդ կը կոչուի Հայաստան: Կը խորհիմ, որ վաղուց ժամանակն է, որ վերջ տանք այդ բաժանումին, վերջ տանք զիրար բաժան-բաժան անելէ. այլեւս գիտնանք, թէ մեր մեծագոյն գէնքը մենք ենք»:

Այո՛, ճիշդ է մեր նախագահը: Հայաստանի մէջ օրէ-օր ուռնացող եւ գարգացող մեր ԹՈՒՄՕ կեդրոններով եւ Սփիւռքի մէջ միջազգային համբաւի տէր դարձող մեր ԱՖՖեաններով եւ Փաթիւթեաններով մեր ժողովուրդին գիտական յառաջընթացը երաշխիք է մեր ազգային շողողուն ապագային եւ գալիք մեր բոլոր յաջողութիւններուն: Մեր ազգը, յաջորդ հինգ տարուան ընթացքին, երբ Արցախի ռուսական խաղաղապահ ուժերու ներկայութեան վերջ դրուելու վիճակին առջեւ գտնուի, փոխանակ Լիպարիտեանի խորհուրդ տուած բանակցութիւններու գիշող դիրքերուն վրայ կանգնելու, պիտի իր նորաստեղծ գիտական ուժին յենած յարգանք պարտադրէ թշնամիին եւ նեցուկը ապահովէ բարեկամին: Մեր ներկայի խորտակուած ազգային արժանապատուութիւնը պիտի դառնայ խթան անհասնելի յառաջդիմութեան եւ յաջողութեան: Մենք նեղութեան, դժուարութեան ու թշուառութեան մէջ հրաշքի համագոր գործ կը կատարենք: Վկայ Յեղասպանութենէն դուրս եկած մեր սփիւռքահայ սերունդը եւ սովետական ճնշող թաթին տակ ազգասիրութեամբ հայրենիք կերտող մեր ժողովուրդը: Մեր անցեալը երբեք չէ եղած այսքան յուսադրիչ եւ լեցուն այլազան կարելիութիւններով, թէ՛ հայրենիքի եւ թէ՛ Սփիւռքի մէջ: Մենք նորէն ոտքի կը կանգնինք, որովհետեւ մենք ենք մեր ամէնէն ուժեղ գէնքը:

Եւ միշտ յարութիւն առած մեր ժողովուրդը անմահանուն Յովհաննէս Թումանեանի գրիչով յօրինուած երգը հպարտութեամբ պիտի երգէ՝ ըսելու, թէ ներկայի իր գրկուած ու զարկուած ողբի հայրենիքէն դուրս է եկած եւ դարձած է նորէն յոյսի հայրենիք, նոր եւ լոյսի հայրենիք, հզոր հայրենիք:

«Ձգուչացէր Դռները Փակուոն Են»

ԲԱԳՐԱՏ ԷՄՈՒԳԵԱՆ

Որքան ալ կրկնութեան տպւորութիւն գոյանայ ստիպուած ենք Հայաստանի համար կենաց ու մահի նշանակութիւն ունեցող խնդիրը կրկին ու կրկին արծարծելու:

Ինչպէս ականատես կ'ըլլանք Արցախեան պատերազմի աւարտելէն ետք Թուրքիոյ կարգ մը յայտարարութիւններով կրկին օրակարգի եկած էր Թուրքիա Հայաստան անգոյ յարաբերութիւններու բարելաւման խնդիր մը:

Թուրքիոյ մէջ բաւական ցած ճանով հնչած այս խօսքերը մեծ արձագանգ գտան Հայաստանի մէջ: Հասկնալի եւ բնական երեւոյթ մըն է այս, քանի որ Հայաստանի տնտեսութեան համար կարեւոր նշանակութիւն ունի Հայաստան-Թուրքիա սահմանագիծը, որ երկար տարիներ է ի վեր փակ է Թուրքիոյ գործադրած շրջափակման հետեւանքով:

Միւս կողմէ փակ սահմանի առկայութիւնը միջազգային գետնի վրայ ամօթալի երեւոյթ մըն է Թուրքիոյ հաշուոյն: Սակայն Թուրքիա այս ամօթը սրբագրելու համար իսկկը փորձէ պայմաններ առաջադրել Հայաստանին: Այդ պայմաններու գլխաւորն է Թուրքիան ուղղակիօրէն Ատրպէյճանի կապող միջանցքը:

Պարտինք լինել թէ Թուրքիոյ այս ցանկութիւնը նորութիւն մըն է: Անցեալին ալ Թուրքիոյ ծանօթ քաղաքական գործիչներէն Պիլլինթի Էնելիթ նման բնօրէն պահանջ մկ ներկայացուցած էր մատնանշելով Ձանգեզուրի հատուածը:

Իր մտքի ծալքերուն մէջ Թուրքիան երազանքը վառ պահած թրքական քաղաքականութիւնը իր նպատակին համար խոչընդոտ մը ըլլալով տեսած է Հայաստան երկիրը: Անշուշտ իր այդ դժկամութիւնը հրապարակելու համար ձեռնարկելու էր նուազագուծ Խորհրդային Միութեան առկայութեան տարիներուն: Բայց այսօր, երբ այլեւս նման վահանակ մը գոյութիւն չունի, դիւրաւ կը համարձակի իր պատմական երա-

զանքները իրականացնելու խօսքերու:

Թուրք քաղաքագէտի յատուկ այդ մերձեցման առաջին արտացոլումներէն մէկն ալ եկած է դարձեալ նախկին քաղաքական գործիչներէն Սիւլէյման Տեմիրէլի բերնէն: Խորհրդային Միութեան տարանջատման տարիներուն ան ալ յաճախ կ'երագէր Ատրիյաթիքի ծոցէն մինչեւ Չինական պարիսպներ երկարող թրքական աշխարհի մը մասին: Տեմիրէլի այդ խօսքերը քանի մը անգամ կրկնուելէ ետք լուրջ հակադարձ մը ունեցան միջազգային գետնի վրայ եւ Տեմիրէլ անգամ մըն ալ չփորձեց նոյն եղանակով խօսիլ: Բայց պարտինք տեսնել թէ այսօր քաղաքատմամբ Տեմիրէլի շատ աւելի յանդուգն քաղաքական գործիչ մը հրապարակ իջած է եւ անհաւատալի կերպով կ'օգտուի միջազգային խառնիճաղանձութենէ: Էրտողանի, Փուլինի, Պոլսոնարոյի, Մերքելի կամ Մաքրօնի նման քաղաքական գործիչներու երկիրներու ճակատագիրը ձեռքին մէջ պահած այս օրերուս ամենաանհեթեթ ելոյթները անգամ ստիպուած ենք որոշ լրջութեամբ ընկալելու: Վերջապէս պէտք է մոռնալ, որ նախագահ էրտողան ամբողջ Եւրոպան պատանդ դարձուցած է շահագործելով քանի մը միլիոն գաղթականի դէպի Եւրոպայ թափանցելու վարկածը: Այս պայմաններու մէջ Հայաստան պարտաւոր է մեծ զգուշութեամբ դիմաւորելու Թուրքիոյ պարի հրաւերը:

Պէտք է մոռնալ թէ արջուն հետ պար բռնողը ի սկզբանէ ընդունած է թէ պարին երբ աւարտուելուն որոշումը արջը պիտի ճշդէ: Այս պահուն կը խօսինք ամբողջ երկրի մը անվտանգութեան մտահոգութիւնով:

Անցեալին այս սիւնակի վրայ արծարծած էինք Տրապիզոնի նաւահանգիստէն մինչեւ Հայաստան երկարող ազատ գոտիի մը նիւթը, որ մեզի համար կրնար նշանակել հողային հատուցում:

Տխուր է տեսնել թէ ուր էինք եւ ուր հասանք:



ՀՐԻՄԻՍԻՅԻՆ ԱՐԻՒԿԼՅԻ ԱՐԻՄՏԵԱՆԻ ԹԻՒ

Հոլանտարոյրտեանի
ԹԻՒՄ ԲԱԿԵԱՆԻ ԱՄԼՁՄԻԻ

Գերշն. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐ.Ք. ՏԵՐՏԵՐԵԱՆԻ

Հայկականիտարոյրտեանի
«ԶՈՒՐԹՆՈՑ» Մշակութային Մարմնի

10-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Քսենիա
Փրօֆ. ՊԱՐԼՕ ՏԵՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Տեղի կ'ունենայ
Կիրակի, Նոյեմբեր 7, 2021, երեկոյեան ժամը 6:00-ին
Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ
2215 E Colorado Blvd., Pasadena, CA 91107

ՀիւրասիրտութիւնՄուտքը Ազատ

ՀՀ Անկախութեան 30 Ամեակին Նուիրուած Միջոցառում Լաս Վեկասուսում



Գիրքին ուշագրաւ կէտերէն մէկն այն է, որ հեղինակը թարգմանիչի պաշտօնի բերումով կը նշմարէր իւրաքանչիւր ռուս զօրավարի, գնդապետի, հրամանատարի վերաբերմունքը հայոց եւ Անդրանիկին նկատմամբ, որոնք եղած են հակասական՝ յարգալիցէն մինչեւ արհամար հական: Այսպէս՝ տարբեր էին զօրավարներ Օզանովսկի,

Զերնօզուկով, բացայայտօրէն հայտեաց Զօր. Աբա ցի եւ, գնդապետ Ֆիլիպով, Զօր. Սերկէեւ, գնդապետ Շատիրով:

Հեղինակը մանրամասնօրէն տալէ ետք 1916-ի դէպքերը, որոնց մասնակիցն էր եւ նոյնիսկ լուսանկարած, յետագայ իրադարձութիւնները կը ներկայացնէ հպանցիկօրէն՝ կովկասեան դէպքերը 1917-1918-ին, Կարինի եւ Կարսի ցաւոտ անկումները, հայկական նահանջը, մայիսեան մարտերը, վրաց-թրքական սադրանքները, Անդրանիկի բացասական դիրքորոշումը Հայաստանի հանրապետութեան վարիչներուն հանդէպ, Զանգեզուրի իր մարտերը, Անդրանիկ-Դրօ հակասութիւնները, անոր վերադարձը Թիֆլիս եւ ապա անցումը Փարիզ եւ հուլիս՝ ԱՄՆ:

Չօրավար Անդրանիկ-Վարդգէս Ահարոնեան վերջին հանդիպումը կը պատահի 1922 Մայիսին, Փարիզ: ԱՄՆ-ի մէջ Անդրանիկ կ'ապրէր Ֆրեզնօ եւ 1927-ի գարնան կու գայ Նիւ Եորք՝ հանդիպելու իր վաղեմի քարտուղար-թարգմանիչին, սակայն այդ օր հոն չէր Ահարոնեան եւ հանդիպումը չի կայանար: Աւելի ուշ՝ Օգոստոսի վերջին օրը, երկրային կեանքին հրաժեշտ կու տար հայ ժողովուրդի հերոսական ու առասպելական զօրավար, հմուտ եւ խիստ հրամանատար Անդրանիկ Օզանեանը:

Արդարեւ, անդրանիկափոտութեան մէջ շահեկան հատոր մըն է այս գիրքը, որուն վերահրատարակութիւնը ողջունելի է անտարակոյս: Իսկ ընթերցումը՝ առաւել եւս:

Վանօ Սիրադեղեանի Յիշատակին

Շարունակուած էջ 2-էն

ռեւս վաղաժամ է: Միակ բանը, որ ինձ համար անհասկանալի մնաց, թէ ինչու 2018 թուականի յեղափոխութիւնից յետոյ այս իշխանութիւնը, որն ամէն ինչով, կարծես թէ հակադրուած է «նախկիններին», Վանոյի հարցում շարունակեց Քոչարեանի եւ Սարգսեանի քաղաքական գիծը (կարծում եմ, ոչ ոք չի կասկածում, որ, անկախ իրաւական մանրամասներէ, խնդիրը քաղաքական էր): Այլապէս՝ մարդը գոնէ իր վերջին տարիները կ'անցկացնէր հայրենի եզերքում:

«ԱՌԱՒՕՏ»

Կրթութեան Ջահակիր Արփի Աւանեսեանը (ԳԲԸՄ Մանուկեան-Դեմիրճեան Վարժարանի 45-Ամեակին ԸՆդառաջ)



ՅՈՎՅԱԼՆԵՍ ՊՈՒՄՐՈՒՅԵԱԼ

Սփիւռքում հայապահպանութեան հարցը միշտ եղել է ազգային հրատապ խնդիրներից, որին անմնացորդ ծառայել է հայոց սրբազնասուրբ մայր եկեղեցին ու հայ դպրոցը: Յաւօք սրտի, լուսանճեղուսահայ գաղութը վերջին տարիներին ականատես եղաւ հայկական մի քանի վարժարանների փակման տխուր իրողութեանը, որի պատճառած ցաւը համր ու կոչը դարձրեց շատերիս՝ տեսնելու եւ գնահատելու այն ովկիանոսածաւալ աշխատանքը, որ տարւում է որոշ կրթօճախներում, որոնցից մէկն էլ ՀԲԸՄ Մանուկեան-Դեմիրճեան վարժարանն է:

Դպրոցն իր 45-ամեայ պատմութեան ընթացքում անցել է բազմաթիւ յաջողութիւնների ու նեղութիւնների միջով: Առաւել ծանր էին համաշխարհային տնտեսական ճգնաժամի եւ դրան յաջորդող տարիները, երբ աշակերտների թուի ահաւոր նուազման հետ, դպրոցը կանգնեց ֆինանսական եւ այլ դժուարութիւնների առջեւ: Հաստատութեան համար նոր արշալոյս բացուեց, երբ 2015 թ.-ին տնօրէն դարձաւ ազնուափայլ հայուհի, տիկին Արփի Աւանեսեանը եւ դպրոցում սկսուեց բարեփոխումների եւ վերելքի շրջան:



Նրա առաջին քայլերից մէկը վարժարանում մայրենի լեզուի դերի բարձրացումն էր եւ հայերէնի դասաւանդման հետ կապուած արդիական ու հիմնարար փոփոխութիւնների մեկնարկը: Մի կողմ դնելով ժամանակավրէպ կարծրատիպերը՝ դպրոցում արեւմտահայերէնից բացի սկսուեց դասաւանդուել նաեւ արեւելահայերէնը: Այս քայլով հնարաւորութիւն ընձեռնուեց աշակերտներին առանց արհեստական դժուարութիւնների հանգիստ արտայայտուել այն լեզուով, ինչ որ լսում էին իրենց ընտանիքներում: Հպարտութեամբ պէտք է ընդգծել, որ նորարարութեան ար-

դիւնքում, դպրոցի հայերէնի ուսուցիչների թիւն անհամեմատ մեծացաւ: Եթէ ժամանակին սփիւռքի դպրոցներում հայերէնի ուսուցիչ աշխատելու նշաձողը մայրենի լեզուի իմացութիւնն էր, հիմա հաստատութեան ուսուցիչներն ունեն համապատասխան մասնագիտական բարձր կրթութիւն եւ որակաւորում:

Տիկին Աւանեսեանն իր աշխատանքային թիմի հետ դպրոցում նոր թափ հաղորդեց հայերէնի ք-սփիւռք կապերին՝ բարձրացնելով այն նոր որակի: 2017 թ.-ից սկսած անձամբ գլխաւորեց երկրորդական վարժարանի աշակերտների այցը դէպի հայրենիք: Այս ընթացքում դպրոցականները կարողացան ոչ միայն սեփական աչքերով տեսնել Հայաստանը, այլեւ մասնակցել նրա կեանքին՝ կամաւոր աշխատելով տարբեր ոլորտներում: Սրանով իրենց օգնութեան բաժինը բերեցին մեր երկրին, միաժամանակ հմտացան իրենց ապագայ մասնագիտութիւնների մէջ:

Տնօրէնի յորդորով, ուսումնական տարուայ ընթացքում ձեւաւորուած աշակերտական խմբակներում յատուկ նուէրներ էին պատրաստուում մարզադպրոցների, մանկատների, զոհուած ազատամարտիկների ընտանիքիներին եւ վիրա-

ւոր զինուորների համար՝ արժանանալով պետական ու մասնաւոր շնորհակագրերի: Վարժարանի հեղինակութեան բարձրացման վկայութիւններից մէկն էլ այն է, որ Մայր հայրենիք հասնելուն պէս աշակերտներին դիմաւորում էին պետական այրեր: Տիկին Աւանեսեանի մասնաւոր ջանքերով դպրոցականները հիւրընկալուում էին ՀՀ Նախագահի, Վարչապետի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: ՀԲԸՄ ոգին զօրացնելու եւ արմատաւորելու ուղղութեամբ, միջոցառումներից ու զրոյցներից զատ,

Շար.ը էջ 19

Բարի Եկած էք «Զնտուկ Մանկավարժական Աղբիւրներ Արեւմտահայերէնով» Կայքէջը



Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը ուրախութեամբ կը տեղեկացնէ, որ 16 Հոկտեմբեր 2021 թուականին տեղի պիտի ունեցած է Զնտուկ կայքէջին առցանց ներկայացումը:

Զնտուկը (zndoog.com) համացանցային լայնածաւալ շտեմարան մըն է, ուր ընդգրկուած են աշխարհի չորս ծագերուն ստեղծուած մանկավարժական արեւմտահայերէն աղբիւրներ եւ գործիքներ: Կայքէջը կը ներկայացնէ հայերէնի ուսուցման արդիական մեթոտաբանութեամբ պատրաստուած ծրագիրներ:

Համացանցային այս կեդրոնին շնորհիւ՝ մանկավարժներ, ուսուցիչներ եւ ծնողներ, դպրոցներէն ներս կամ դուրս, իրենց տրամադրութեան տակ պիտի ունենան հարուստ առցանց վայր մը: Աւելին՝ Զնտուկը հասանելի պիտի ըլլայ բոլոր անոնց, որոնք պարզապէս հետաքրքրուած են արեւմտահայերէնով եւ կը ձգտին ծանօթանալ ժամանակակից մանկավարժական մօտեցումներուն:

Զնտուկը կ'ընդգրկէ համացանցային հայալեզու էջեր, մանկական տեսերիզներ, ձայներիզներ, շարժապատկերներ, շարժանկարներ, տարբեր տարիքներու համար նախատեսուած ծրագիրներ, նաեւ՝ զրական ստեղծագործութիւններ, բառարաններ, խաղեր եւ այլ գանազան նիւթեր: Զնտուկին մէջ կարելի է գտնել ուսուցիչներու համար պատրաստուած գրաւոր եւ լսատեսողական նոր ուղեցոյցներ, որոնց աջակցութեամբ ուսուցիչները կրնան դիւրութեամբ ըմբռնել ծրագիրներու կիրառութեան հանգրուանները եւ հիմնական մօտեցումները:

Մանկավարժական որոշ սկզբունքներու վրայ հիմնուելով ստեղծուած է Զնտուկը: Լեզուն իր ամբողջութեամբ ընդգրկուած է իբրեւ ապրող, շնչող, ինքզինք զարգացնող, աշխարհին հետ գուգահեռ յառաջացող միջոց, վայր եւ

եղանակ: Կայքէջը կ'որդեգրէ երեխայակեդրոն եւ ուսանողակեդրոն մօտեցում մը: Զնտուկը միշտ պատրաստ է իր բովանդակութիւնը ընդլայնելու: Հետեւաբար, Զնտուկին դռները բաց են իր սկզբունքներուն համապատասխանող այլ լեզուական աղբիւրներու:

Զնտուկի առցանց ներկայացման ընթացքին կ'լոր սեղանը վարած է Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի տնօրէն դոկտ. Ռազմիկ Փանոսեանը: Զրոյցի ընթացքին խօսք առած են Բաժանմունքին արեւմտահայերէնի զարգացման պատասխանատուն, դպրոցներու եւ կրթական ծրագիրներու աւագ վարիչ Անի Կարմիրեան (Լիզպոն, Փորթուկալ), գրող ու Ինալքոյի հայկական գրականութեան դասախօս Քրիստինա Բատիկեան (Փարիզ, Ֆրանսա), Ամերիկայի Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդի վարիչ տնօրէն Մարի Կիւլիւմեան (Նիւ Եորք, ԱՄՆ), Հայ Կապոյտ Խաչի Զաւարեան Ազգային վարժարանի տնօրէն Հայկանուշ Մինասեան (Աթէնք, Յունաստան), Սուրբ Մեսրոպ-Արապեան վարժարանի հայերէնի ուսուցիչ եւ համադրող Նորա Սարաֆեան Թաշձեան (Ալֆորվիլ, Ֆրանսա) եւ ՀԲԸՄ Ալեք Մանուկեան վարժարանի հայերէնի ուսուցիչ Նանոր Սարգիս (Մոնթրէալ, Քանատա):

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի մանկավարժական եւ ուսուցողական բազմապիսի նախաձեռնութիւններուն նորագոյնն է Զնտուկը: Իր ծաւալուն եւ շարունակ ընդլայնող պարունակութեամբ, կայքէջը իսթան պիտի հանդիսանայ արեւմտահայերէնի ուսուցման, զարգացման եւ ամրապնդման:

Այս ծրագիրին եւ այլ նախաձեռնութիւններու մասին յաւելեալ տեղեկութիւններու համար այցելել այս կայքէջը՝ <https://gulbenkian.pt/armenian-communities> եւ անդամագրուել մեր լրատուին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՎԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Յարութիւն Աւագ Քինյ. Շնաւոնեան եւ «Ազդարար» Ամսաթերթը



ԱՐՄԵՆ ՔԻՐՔԵՏԱՆ
(Շարունակուած նակորդ թիւէն)

Հայ վաճառականութեան ապագան մութ էր Հնդկաստանի մէջ: Դժուար թէ կարենար մրցակցիլ անգլիացիներուն հետ: Ուրեմն պէտք էր մտածել, աչքը ուղղել դէպի Հայրենիք, որ ունէր բերրի հող: Գանձերով միասին տեղափոխուիլ Հայրենիք, տնտեսապէս հզօրանալ հոն եւ փրկել զայն օտար նուաճողներէն:

Թերթին համարներուն մէջ կը զարգացուի հայերու քաղաքական անկախութեան եւ սեփական պետականութեան ստեղծման գաղափարը, որուն իրականացման համար անհրաժեշտ կը նկատուի լուսաւորութեան միջոցով հայերը հասցնել ինքնաճանաչման մակարդակի, անոնց ցոյց տալ ապրած կեանքներուն իմաստը եւ անցնելիք ճամբերուն նպատակը:

«Հայորդի Հայ»-ի եւ «Ազգակից»-ի հրատարակախօսական յօդուածներն ալ արծարծած են հայրենիքի ազատութեան, անոր համար արժանաւոր քաղաքացիներ դաստիարակելու հարցերը: Կարծիքներ յայտնուած են, թէ «Հայորդի Հայ»-ը Մովսէս Պաղրամեանի եւ «Ազգակից»-ն ալ Շ. Շահամիրեանի ծածկանուններն էին:

Թերթին հրատարակախօսները ժողովուրդը կը խրատեն իրենց գանձերը հաւաքելու եւ Հայաստան երթալու, ըլլալու միաբան, իմացականութեան եւ բանականութեան առաջնորդութեամբ պայքարելու իրենց ազատութեան, փառքին, պատիւին եւ բարօրութեան համար:



Յարութիւն քինյ. Շնաւոնեանի դամբարանը Մատրասի մէջ

Լէօ կը գրէ. «Արեւմտեան երկիրներում, յատկապէս Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ, հրատարակախօսութիւնը տիրելով հասարակութեան մտքի վրայ, դեկավարում եւ շարժում էր նրան: Հրատարակախօսութիւնն այնպիսի մի ուժ էր դարձել, որից վախենում էին նոյնիսկ կոպիտ ֆիզիքական ոյժի ներկայացուցիչները»:

Բացի տեղացի թղթակիցներից, «Ազդարար»-ին կ'աշխատակցի նաեւ ռուսահայոց առաջնորդ Յովսէփ արք. Արղութեան՝ իր «Օրհնութեան թուղթ»-երով, ուղերձներով եւ նամակներով, ուր ան կը զարգացնէ Ռուսիոյ օգնութեամբ Հայաստանը Թուրքիոյ եւ Պարսկաստանի լուծէն ազատագրելու գաղափարը: Ստեփաննոս Յովհաննէս Գուլամիրեանն ալ ժամանակակից անցուղարձերու մասին տեղեկութիւններ կը ղրկէ: «Ազդարար»-ի մէջ հրատարակուած են Կովկասի եւ Անդրկովկասի անցուղարձերուն, ռուս-թրքական պատերազմներուն, հայկական անցուղարձերուն, ֆրանսական յեղափոխութեան դէպքերուն շուրջ տեղեկութիւններ: Թղթակցութիւններ կը ստացուին Կարկաթայէն, Պասրայէն, Չինաստանէն, Ֆիլիպիններէն: Նիւթեր կը տպագրուին Երեւանէն, Շուշիէն, Անգլիայէն: Որովհետեւ գաղութը առաւելաբար կազմուած էր պարսկահայերէ, լայն տեղ յատկացուած է Պարսկաստանի եւ պարսկահայ լուրերու:

Առաջին հայ պարբերականին թղթակիցները գերազանցապէս եղած են առեւտրականները, որոնք ճամբորդութիւններու ընթացքին հաղորդակից կը դառնային նոր երեւոյթներու ու դէպքերու եւ անոնց մասին յօդուածներ կը ղրկէին, նաեւ հոգեւորականներ, պաշտօնատար անձեր, հայկական դպրոցի աշակերտներ: Թղթակիցներէն շատերը չեն կարողացած իրենց մտքերը գրաբարով արտայայտել: Շատեր գրած են անկատար հայերէնով կամ գրաբարի եւ բարբառի աններդաշնակ խառնուրդով մը: Շմաւոնեան գանտնք նոյնութեամբ կը տպագրէ՝ տեղի հայ գաղութին ազգային երանգը «Ազդարար»-ի միջոցով ցոլացնելու նպատակով:

Բովանդակութեան իմաստով՝ Թերթը հիմնականօրէն նկատի ունէր հնդկահայ գաղութը: Տեղական թերթ մըն էր եւ պարտաւոր էր ամէնէն առաջ գոհացնել իր տեղական կարիքները, ընթերցողներուն ճաշակը: Այդ գաղութին բարեկեցիկ տարրը հայ վաճառականներն էին,

հիմնականօրէն նկատի ունէր գանտնք: Աշխատակիցներ ունէր անոնցմէ: Կը տպէր անոնց յայտարարութիւնները, ճամբորդական նոթերը, պսակն ու մահը, նորածիններու ծնունդը:

«Ազդարար»-ի թիւերը ունէին որոշ շարք: Նախ կը տրուէին ծանր նիւթերը կամ պաշտօնական յայտարարութիւնները, օրինակ՝ Յովսէփ արք. Արղութեանի շրջաբերական-նամակները:

Ծանր նիւթերը երբեմն կը գրաւէին ամսաթերթին ծաւալին գրեթէ կէսը: Անոնց կը յաջորդէին ստացուած թղթակցութիւնները, որոնք կը շօշափէին գանազան հարցեր, յետոյ լուրերու բաժինը՝ տեղական, պարսկական եւ եւրոպական: Առակ մը՝ հոգեկան քիչ մը հանդարտութիւն առթելու համար: Ծանուցումներ, վաճառելի իրերու սակ, ծնունդ, մահ եւ այլն: Վերջին էջը յատկացուած էր օրացոյցի, երկու ամսուան վրայ՝ տուեալ ամիսը եւ յաջորդը: Ընդհանուր առմամբ այս էր շարքը: Երբեմն խախտումներ կ'ըլլային:

«Ազատական Ֆրանսայի դէմ գինուած Եւրոպան իր անընդհատ պատերազմներով առաջացրել էր համաշխարհային առեւտուրի մէջ սաստիկ ճգնաժամ, եւ մեր վաճառականները Հնդկաստանում եւ ուրիշ տեղերում տրտունջ էին անում, որ առեւտրի մէջ օգուտ չի մնացել, որ առեւտրականի արտաքինն է միայն շրջուցիչ, մէջտեղ իրապէս ոչինչ չահ չկայ: Եւ «Ազդարար»-ը, ինչպէս վաճառականների բերան, յաճախ մաղթում էր աշխարհին խաղաղութիւն, մի բան, որ այնքան հարկաւոր էր մանաւանդ ծովեր եւ ցամաքների չափափող վաճառականին: Եւ այսպէս՝ «Ազդարար»-ն ամէնից առաջ հանդիսանում էր գերազանցօրէն մի վաճառականական հրատարակութիւն: Այս գործով հայ վաճառականութիւնը ժ.Ը. դարի վերջին հասնում էր իր այն աշխարհականացնող ազդեցութեան գագաթնակէտին, որին մենք քայլ առ քայլ հետեւում էինք նոր պատմութեան սկիզբը» (Լէօ):

«Ազդարար»-ը կանոնաւոր կերպով կը հրատարակուի տասնութ ամիս՝ Հոկտեմբեր 1794-Փետրուար 1796, տարով ընդամէնը տասնութ տետրակ՝ չորսը 1794-ին, տասներկուքը 1795-ին եւ երկուքն ալ 1796-ի առաջին երկու ամիսներուն: Վերջին թիւին մէջ ո'չ մէկ ակնարկութիւն կայ դադրեցման մասին:

«Ազդարար»-ի որոշ թիւեր եղած են պատկերազարդ ու կարմիր տառերով՝ տօնական թիւեր, այսօրուան հասկացողութեամբ՝ բացառիկ թիւեր:

«Ազդարար»-ի բաժանորդներուն թիւը շատ սահմանափակ եղած է՝ Հնդկաստանի մէջ 28, Արեւմտահայաստանի մէջ 10, իսկ Ռուսիոյ եւ Արեւելահայաստանի մէջ՝ Նոր Նախիջեւան եւ Էջմիածին, լայն շրջանառութիւն գտած է շնորհիւ Ստեփաննոս Յովհաննէս Գուլամիրեանի ջանքերուն:

«Ազդարար» հակառակ այդքան քիչ բաժանորդագրութեան, սակայն շնորհիւ Շմաւոնեան քահանայի անձնական կարողութիւններուն, կրցած է տասնութ ամիս հրատարակուիլ: Թերթը կարեւոր ներդրում ունեցած է հայ քաղաքական մտքի զարգացման մէջ:

Թերթին մէջ, նիւթական պատճառներով հրատարակութենէ դադրելէն մի քանի ամիս առաջ, խմբագրին ամէնամսեայ քաղաքական տեսութիւններուն մէջ յաճախակիօրէն տեղ կը գտնեն «անմխիթար ժամանակ», «անարդիւն ժամանակ, որ իսպառ փակեալ կան ի դէմս մեր դրունք եկամտից», «անյաջող ժամանակ» արտայայտութիւնները: Շմաւոնեանի թղթակիցները կը նկարագրեն միջազգային շուկային մէջ ապրանքներու գիններու անկման հետ կապուած անցուղարձերը եւ իրենց ծանր ապրումները:

«Ազդարար»-ի մէջ հրատարակուած ծանուցումէ մը կը պարզուի, թէ գաղութահայութիւնը փորձած է կազմակերպել դրամական վիճակախաղ, որուն եկամուտը պիտի տրամադրուէր Շմաւոնեանի տպարանին, բայց, հաւանաբար, այդ ծրագիրը կա'մ չէ իրականացած, կա'մ շօշափելի արդիւնքի չէ հասած:

Հայ առեւտրականներու բարոյական եւ տնտեսական երբեմնի գօրու-թիւնը խորհրդանշող «Armenian Merchant - Հայ վաճառական» նաւը 1795-ին ծովահններու կողմէ կը բռնագրաւուի, կը կողոպտուի եւ կը նետուի Մալագայի մօտերը:




Ըստ Արեւելահայկական ընկերութեան հետ կնքուած պայմանագրութեան, այս դրօշակը կ'ընդունուի որպէս հայ վաճառականական ընկերութեան հետ կնքուած պայմանագրութեան, այս դրօշակը կ'ընդունուի որպէս հայ վաճառականական նաւերու դրօշակը:

1686-ին, Արեւելահայկական ընկերութեան (The East India Company) հետ կնքուած պայմանագրով հայ վաճառականները անգլիական ազդեցութեան ոլորտներուն մէջ գըտնուող բոլոր երկիրներուն մէջ ազատ առեւտուր ընելու, սեփականատէր դառնալ կարենալու, պաշտօններ վարելու իրաւունքը կը ստանան: Այդ պայմանագրով կ'ամրապնդուի հայ վաճառականներուն դիրքը, սակայն հետագային անոնք աստիճանաբար կը կորսնցնեն իրենց ինքնուրոյնութիւնը եւ դուրս կը մղուին անգլիացի մրցակիցներու կողմէ:

«Ազդարար»-էն օրինակներ պահուած են Հայաստանի, ինչպէս

Յարութիւն Աւագ Քինյ. Շնաւոնեան եւ «Ազդարար» Ամսաթերթը

Շարունակուած էջ 16-էն



նաեւ Սփիւռքի հայկական բոլոր մեծ գրադարաններուն մէջ: Ամսագրին աշխարհի մէջ պահպանուած հաւաքածոններուն թիւը հազիւ կրնայ հասնիլ տասնեակի մը: Հազուադիւրս այս մասունքներէն երեքը կը գտնուին Հայաստան:


Երեւանի Ազգային Գրադարանին մէջ կը պահուի «Ազդարար»-ի առաջին թիւը եւ ան կը ցուցադրուի գրադարանին կից գտնուող Գրատպութեան Թանգարանին մէջ:

«Ազդարար»-ի հրատարակութեան 175-ամեակին առթիւ, «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութիւնը երկու հատորով ամբողջութեամբ վերահրատարակած է «Ազդարար»-ը՝ 965 էջ ընդհանուր ծաւալով:

1809 թուականին, Յարութիւն քնյ, Շնաւոնեան իր տպարանին տնօրէնութիւնը կը յանձնէ իր շնորհալի աշակերտ Մկրտում Սիմէոնեանի եւ այլ «նորոգ ուսեալ» գործիչներու: Ինք կը շարունակէ մասնակցիլ գաղութի հասարակական կեանքին:

Յարութիւն քնյ, Շնաւոնեան 15 տարի եւս կ'ապրի եւ 1824-ին կը վախճանի: Իր անունը հայոց համար կը մնայ յաւիտ անմոռանալի: Հայոց եկեղեցւոյ պարտէզին մէջ այդ թուականներու շիրմին վրայ կը գրուի.

«Որ ի սուրբ կրօնի լեալ արթուն վարուք, Ուշիմ եւ զգաստ, չամենուստ յարգեալ, Ճարտար, խոհամիտ եւ սուրբ հանճարիւք Յանգեալ զծեր կեանս՝ կայ աստ հողացեալ, Աստ հանգչի տէր Յարութիւն Շնաւոնեան, բարեկրօն Աւագերէջ Մատրասի Հայոց: Մնեալ ի Շիրազ, վախճանեալ յամի տեառն 1824,



Ֆէյվրէ 9, ի հասակի 74 ամաց: Քահանայազործեալ սատ արթնութեամբ զամս քառասուն»:

Յառաջիկային, հայոց առաջին թերթը հրատարակող այս անձին համար իր համբաւին շատ աւելի պատշաճ դամբարան մը կը կառուցուի:

Դժբախտաբար Շնաւոնեան դիմանկար չէ ունեցած եւ եթէ նոյնիսկ ունեցած էր, իր գործունէութիւնները ուսումնասիրող ակադեմիականներուն ձեռքը չէ անցած: Այն որ կը ներկայացուի որպէս իր դիմանկարը, հայ լրագրութեան հարիւրամեակին առթիւ՝ 1894, Վիեննական Միութարեան վարդապետներուն լրագրութեան նահապետը պատուելու համար պատրաստած երեւակայական նկարն է:

«Ազդարար»-ին նուիրուած են զանազան յոբելեաններ, մանաւանդ մեծ շուքով տօնուած է թերթին հիմնադրման 200-ամեակը:


200-ամեակին առթիւ «Հայ Փոստ»-ը թողարկած է նամականիշ: «Ազդարար»-ի հրատարակութեան 225-ամեակին եւ Մայր Աթոռի պարբերական «Էջմիածին»-ի 75-ամեակին առթիւ, 28-29 Նոյեմբեր 2019-ին, Հայաստանի Ազգային Գրադարանին մէջ «Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձեւաւորման եւ պահպանման գործին մէջ՝ ընտանիք, հայրենիք, եկեղեցի» խորագրով մամուլի երկօրեայ գիտաժողով կազմակերպուած է: Գիտաժողովին կը մասնակցին Հայաստանի, Սփիւռքի եւ Արցախի զանազան գիտակրթական եւ մշակութային հաստատութիւններէ աւելի քան քառասուն գիտնականներ եւ հետազոտողներ:

Անոնք երկու օրուան ընթացքին կը ներկայացնեն հայ մամուլի ընթացքին մասին յոյժ հետաքրքրական զեկոյցներ, կարեւոր նիւթեր՝ Կ.Պոլսոյ, Չմիւռնիոյ, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ տպուած թերթերու, ամսագրերու էջերէն, կը քննարկեն մատենագիտական եւ մամուլի թուաչնացման հարցեր: Գիտաժողովի զեկոյցներուն մէջ յատուկ տեղ գրաւած են արեւմտահայ եւ Պոլսոյ մամուլը: Հայ մամուլի պատմութեան ամենաշատ անունները գոյութիւն ունեցած են այդ շրջանին մէջ: Արեւմտահայ, յետոյ ալ Կ.Պոլսոյ մամուլը իրենց փառաւոր ընթացքով հայ մամուլի պատմութեան ոսկեայ էջերէն մին կերտած են: Համաժողովին ընթացքին կազմակերպիչները կը յիշեն նաեւ Կ.Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթը, որպէս հայաշխարհի մինչեւ այսօր անընդհատ հրատարակուող ամենաերկարակեաց հայկական օրաթերթը: «Ժամանակ»-ի գլխաւոր խմբագիրը օղանաւային չուերթի Չնջման պատճառով չէ կրցած իր «Մամուլ, ընտանիք, հասարակական դերերու գուգահեռներ» խորագրեալ զեկոյցը ներկայացնել:

Ֆրանսացի հայագէտ էտուար Տիւլորիէ հետեւեալ գեղեցիկ վկայութիւնը կու տայ հայ լրագրութեան մասին. «Թէպէտեւ ընկերագրաց դրամովը եւ կամ առանձնականաց սատարութեամբ միայն անած, առանց պետական ձեռնտուութիւն մը ունենալու, ինչպէս են տաճիկ լրագիրք, սակայն անոնցմէ շատ աւելի բարգաւաճ ու յառաջադէմ: Բաւական թիւով հայագիր բնակիչ ունեցող քաղաք մը չկայ, որ զէթ փորձ մը փորձած չըլլայ՝ լրագիր կամ ուսումնական հանդէս մը հրատարակելու: Այս նկատմամբ Արեւելեան ուրիշ ամէն ազգերէն աւելի յառաջադէմ են. եւ իրենք եղան առաջին քաղաքական ու բանասիրական օրագրոց գաղափարը տարածող ու ծաւալող յարեւելս» (Հ. Զարպահանլեան, «Պատմութիւն Հայկական Դպրութեան Բ.», էջ 469):

(Վերջ)

Մանուկներու Նոր Աստուածաշունչ Մանուկներու Բացատրական Աստուածաշունչ՝ Կեանքի Սեծ Հարցումները Փոքրիկ Ընթերցողներու Համար



«Կրթմանուկը իր ճանքան սկսած ատենը, որպէսզի երբ մեծնայ՝ անկէ չշեղի» Առակած 22:6

«Յաճախ մանուկներ հարցումներ կը հարցնեն եւ ծնողք կամ ուսուցիչ կը շուարին, թէ ինչպէ՞ս պատասխանեն, ի՞նչ ըսեն, ի՞նչ չըսեն, եւ կամ ինչպէ՞ս պարզ բայց ճշմարիտ եւ ճշգրիտ պատասխան տան: Ըստ մանկավարժներու եւ հոգեբաններու, անոնց փնտռածը

բացատրութիւններ են, որպէսզի ապահով զգան եւ հասկնան, թէ ի՞նչ կը պատահի իրենց շուրջը:

«Այս յատուկ Աստուածաշունչը՝ 6-12 տարեկան մանուկներու համար լուրջի կ'առնէ փոքրերու հարցումները՝ իրենց մասին, շուրջի մարդոց մասին, եւ աշխարհին մասին, եւ պատասխաններ կուտայ հիմնուած Աստուածաշունչի պատմութիւններուն վրայ: Այս իմաստով, գիրքը խիստ օգտակար է ոչ միայն

ծնողներու այլ նաեւ Կիրակնօրեայ Դպրոցի եւ աւօրեայ դպրոցի ուսուցիչներու համար» կը բացատրէ Դոկտ. Հրայր Ճէպէճեան, Ընդհանուր Քարտողար՝ Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան:

Գիրքին Մասին
Գիրքին հեղինակները՝ Սուզըն Ճաշ եւ Քրիսթինա Շնըրլ, հոգեւոր հովիւներ են Շթուլթկարթի մանուկներու Օլկա հիւանդանոցին մէջ, ուր տարիներու ընթացքին եւ իրենց փորձարութիւններէն մեկնած, մօտէն ծանօթացած են փոքրիկներու փնտրութիւններուն: Անոնք հաւաքած են այդ հարցումներէն ոմանք եւ ներկայացուցած են զանոնք աստուածաշնչական պատմութիւններու միջոցով: Իսկ Մաթիաս Ուէպըր ներկայացուցած է պատմութիւնները պարզ եւ գեղեցիկ գծագրութիւններու միջոցով:
120-էջ, պատկերազարդ գիրքը կը բաղկանայ երեք մասերէ՝ «Դուն», «Դուն եւ Ուրիշները», եւ «Դուն եւ Աշխարհը»: Իւրաքանչիւր բաժին ունի իր ենթաբաժինները: Օգտագործուած բոլոր աստուածաշնչային

հատուածները գետեղուած են գիրքին վերջաւորութեան:

Այս գիրքին մէջի պատմութիւններու շարքը չի հետեւի Աստուածաշունչին պատմութիւններու շարքին: Հեղինակներուն նպատակը աստուածաշնչային լոյս սփռել է փոքրիկներու եւ պատանիներու կեանքերուն եւ կարիքներուն վրայ, նաեւ կապ մը ստեղծել անոնց եւ Աստուածաշունչի մէջ գտնուող անձնաւորութիւններուն միջեւ: Այսպիսով անոնք իրենց կեանքերը հաստատուն հիմերու վրայ դնելով պիտի գիտնան, թէ Աստուած գիտէ, կը սիրէ, եւ կը պահպանէ գիրքէնք: *****

Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութիւնը միջ-եկեղեցական, ոչ-հասութաբեր կազմակերպութիւն մըն է եւ անդամ Համաշխարհային Միացեալ Աստուածաշունչի Ընկերութիւններուն: Սոյն կազմակերպութեան առաքելութիւնն է Աստուածաշունչը թարգմանել եւ բաժնել, որպէսզի աշխարհի բոլոր ժողովուրդները Աստուածաշունչը կարդան իրենց մայրենի լեզուով:

Արմին-Հայերի Մի Քանի Բարոյացուցիչ Դեպքերի - Մասին 3

Հայ ժողովուրդի պատմութիւնը աշխարհի ժողովուրդների պատմութեան հո-րիզոնի վրայ մի դիւցածնեցողութիւն է յանուն ոգեկանութեան ու հայրենեաց ազատագրութեան

Ամենայն Հայոց Վազգէն Առաջին Կաթողիկոս

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Մուսա Լեւրան Եօղունօլուզ գիւ-ղի Հայկական Կամաւորական Լեզե-ոնի Կապորալ Լազարեան Արմենա-կի ու Հայկէջեան գերդաստանից Զարուհիի առաջին մանչ՝ Պօղոս, մայրիկի կարած լաթէ պաշուսակը վզից կախած, գիւղամիջեան գլխա-ւոր ճանապարհի խաչածեւ խաչմե-րուկի վրայ վեհ կանգած Սուրբ Աստուածին եկեղեցի: Ընդհանրա-պէս, Հայաստանի ու գաղթավայ-րերի եկեղեցիների կողքին հայկա-կան դպրոցներ էին: Ժամկոչը, եկեղեցու դրան կից «Խուցէկ» տարել ինձ, այն նեղլիկ լինելու համար այդպէս էին անուանում: Յատակին խսիր էր փռած, ժամկո-չի յորդորով ծալապատիկ նստել: Գիւղի տարեկից տղաներ եւս եկան: Հայաստանում իշխանութեան եկած Արշակունիների թագաւորութիւն, նախարարներ Տիգրան գնացել, Շա-հին ասել թագաւոր չենք ուզում, կաթողիկոսը նրանց աղաչել էր այդ մտքից ետ մնալ, յորդորել՝ «Հիւանդ ոչխարը աւելի լաւ է քան գայլը» ակնարկելով Արտաշէս III -ը ար-շակունի վերջին թագաւորին: Ան-խոհեմ Արմին-հայ նախարարներ, չորս հարիւր տարին անթագաւոր մնաց երկիրը, պարսիկը եկաւ թա-գաւորեց, նախարարներ խորհուրդ չէին արել հայկազուն մի նախարա-րի հայոց երկրին թագաւորել: Կործանել էին Մեսրոպի դպրոց-ներ, եկեղեցիների կողքին էին դպրոցներ ստեղծել, այդպէս էլ մին-չեւ նոր դարեր:

Հայոց «Առաքելական Եկեղե-ցի»-ն երկրում մի տեսակ իշխա-նութիւն եղաւ, վանքերում մշա-կոյթ ստեղծեց, դպրոցներում հա-յոց մանչերին ազգի պատմութիւն, գիր ու գրութիւն ուսուցանեց, բանաստեղծներ երկնից աստղեր բերին, գիտնական Անանիա Շիրա-կացի գրեց, որ մարդիկ քայլում են արեւի շուրջը պտոյտ տուող կլոր երկրագունտի վրայով, եւ ոչ թէ տափարակ գունդի:

Մեսրոպի աշակերտ՝ Եզնիկ Կողբացի, «Եղծ Աղանդոց» իմաս-տասիրական երկը յորինեց, որտեղ պայծառ մտքով, քրիստոնէութեան հաւատքի բուռն սքանչանքի տա-րերքով աշխարհին աւետոց քրիս-տոնէութեան բացառիկ առաւելու-թիւնը ժամանակի Զրահադաշտա-կան ուսմունքի նկատմամբ: Նոյ-նիսկ մինչեւ հիմա օտարազգի մտա-ծողներ այն համարում են քրիստո-նէութեան ճշմարտութեան գորու-թեան պաշտպանութեան փաստարկ-ման գլխաւոր երկը:

Փաւստոց Բիւզանդ, Ագաթան-գեղոց, Ղազար Փարպեցի իրենց ազգի պատմութիւնը յորինեցին, հայոց պատմիչ Եղիշէ՝ Վարդանանց պատերազմ, Կորիւն՝ Վարք Մաշ-տոցի, Խորենացի՝ ազգի պատմու-թիւն երկնեցին, Դաւիթ իմաստա-սէր Յոյն ու Հրովմէացի իմաստա-սէրներին հետ վէճի բռնուեց, յաղ-թեց, Դաւիթ Անյաղթ կոչեցին, Մեսրոպ ցեղի սրտին Այբ, Բեն, Գրիմ-ի հրաշքի լոյս վարեց: Գրի-գոր Լուսաւորիչի թոռ՝ Սահակ Պարթեւ, Մեսրոպի ու նրա առա-ջին աշակերտների հետ Աստուա-ծաշունչը թարգմանեցին, ազգեր

այն ճանաչեցին որպէս «Թարգմա-նութիւնների Թագուհի»: Հայոց վանքերում վարդապետներ ձեռա-գիր մատենաներ յորինեցին այդ-պէս եղեւ...: Մեսրոպ վազգէն հայրե-նի երկրի բնակավայրեր դպրոցներ հիմնել՝ իր յորինած տառերը ու-սուցանելու, Հայերէն ուսուցանե-լու, որ այն թափանցիչ աշակերտ-ների հոգիներին, նրանց սրտերին Վահագնի ծնունդի բոցերը վառ-ուէին, իրենց երկրում քաջութեան արժանի գործերի պատմները, Մովսէս Խորենացիի ազգի պատու-մը, իրենց Հայերէնը հազար դարե-րի բուքերին, մրրիկներին զարն-ուած լեզու... գեղեցիկ է այն, երաժշ-տական հնչեղութիւն կայ նրա հնչիւններում, իմաստասիրութիւն յորինելու ու ուրիշի գրածը թարգ-մանելու պայծառ միտք, Սիւնեաց գողթան գաւառի բանաստեղծների յորինած բանաստեղծութիւն, իրենց թագաւորների հարսանիքներին՝ եր-գեր: Մեհեանների քուրմերի բնու-թեան պաշտամունքին նուիրուած տաղեր: Քրիստոնէութեան վար-դապետութիւնը մարեց հայոց բնու-թեան ու ճշմարտութեան տօները, ձեւափոխուած նոր իմաստ տուին նրանց:

Վարժապետ Թովմասը «Խու-ցէկ» եկաւ, ոտքի ելանք: Սեւ ներկած տախտակի վրայ Այբ, Բեն, Գրիմ ու միւս տառերը գրեց: Հնչեց իւրաքանչիւր տառը, աշակերտնե-րի հետ կրկնեց: Թովմաս Վարժա-պետ, աշակերտների սովորած տա-ռերով բառեր գրեց, նրանց հետ կարդաց: Մի առաւօտ էլ ասեց թէ արդէն կարող էինք Հայերէն գրել ու կարդալ իրեն հետ գնայինք եկեղեցու կողքին սպիտակ դէմքով կանգնած դպրոց: Դպրոցի սպի-տակ շէնք, արեւի շողերից փայլած շէնք, որտեղ գիւղի մանչերը ուս-եալ պիտի լինէին: Դպրոցի սպի-տակ շէնք, թուրքը փլել է այն, Եօղունօլուզցի մարդիկ ակնածան-քով իշուում այն, իրենց նոր բնա-կավայրում նոր դպրոց, կրկնձ պա-տեցին, որտեղ Մեսրոպի երեսուն գինուորները նորէն Աստուծոյ հետ խօսելու հայերէն ուսուցանեցին:

Սպիտակ դպրոցում հայերէն լեզուի հետ ուսուցանում էին Փրան-սերէն, թուրքաւորութիւն, հայոց պատմութիւն: Թովմաս Վարժա-պետ շարունակում էր հայերէն ուսուցանել: Փրանսերէն լեզուի ու-սուցիչն էր Խրաւրբէկ գիւղից Սար-գիս Թոսունեանը: Փրանսական բա-նակի կազմում Հայոց Կամաւորա-կան Լեզեոնի գինուորներից էր, ծառայութեան ատէն սովորել էր Փրանսերէն: Թուրքաւորութիւն դա-սաւանդում էր գիւղի Սարգիս Գալստեանը: Խստաբարոյ ուսու-ցիչ էր, ով չէր կարողանում լուծել նրա առաջադրած վարժութիւննե-րը ու թուրքաւորական խնդիրները սեղանին եղած գաւազանով մի քանի անգամներ զարկում նրանց ափերին: Այնտեղ մի քանի տարի-ներ ուսանելուց յետոյ փոխադր-ւում կողքի սենեակ, որտեղ Թով-մաս Վարժապետ «Հայոց Պատմու-թիւն» ուսուցանում: Թովմաս վար-ժապետ Չերմեւանդ ուսուցիչ էր, պատմութեան առանձին դրուագ-ներ պատմում, կարծես ինքն էլ եղել այդ մարտերում, դիւցածներ-

գալի նման սրտազատ խոսում: Եւ վերջապէս աւարտում էինք «Սպիտակ դպրոցում» ուսումնա-ւորութիւնը, նախկին թարանի թուղթ էին տուել մեզ: Ուսուցիչներ, ման-չերի սրտերին հոսեցին «Մեծեր»-ի արարած իմաստութիւնը, գիտե-լիքների լոյսը, ճշմարտութեան դա-ւանանքը: Հայ ուսուցիչները, իրենց մանչերին ուսուցանեցին, հայրենի երկրի սէրը, հողի պաշտամունքը, հող՝ որտեղ իրենց նախնիներն էին հանգչում:

Յիշում Մելքոնեան Կրթական Հաստատութեան ուսուցիչները, աշակերտների գրաւոր ու բանաւոր իմացութեան բացառիկ ու ճիշտ գնահատանքը: Առիթն էր չիշխու նրանց, սակայն այն ծաւալուն լի-նելուն համար միտք ունեւ առան-ձին գրութիւնով հրատարակելու, որ նրանք պատմութիւն լինեն:

Խորհրդային Հայաստանի ու-սուցիչներ: Նրանց մեծամասնու-թիւնը յարում էին երկրում գոր-ծող կուսակցութեան գաղափարա-խօսութեանը, պարտադրուած պայ-մանները ընդունողներին կուսակ-ցութեանը անդամագրում: Ամե-նայն հանդէպ տիրապետում էին ոչ միայն իշխող կարգի գիտելիք-ներին, նաեւ հօր իմացութիւն ունէին համաշխարհային գիտու-թեան ու մշակոյթի մասին, մաս-նաորապէս առաւել ուսուցանում այն, որ յարիր էր երկրի գաղափա-րախոսութեանը: Նրանք ջանասի-րաբար աշխատում էին ժամանակի գիտելիքները փոխանցել աշակերտ-ներին: Ուսուցիչ լինելը պատուա-բեր աշխատանք էր: Իւրաքանչիւր տարի «Մետալ»-ի արժանացնում տարուալ ընթացքում առաւել բարձր թուանշաններ ստացած աշա-կերտներին: Դպրոցներում ուսու-ցիչները ու աշակերտների ծնողնե-րի իրարանցում էր, ուսման ընթաց-քում բարձր թուանշանների տի-րած ո՞ր աշակերտին էին յայտա-րարելու «Մետալակիր»: Նրանք որոշակի արտօնութիւններ ունէին բարձրագոյն հաստատութիւններ ընդունուելու համար:

Տան փոքր մանչեր ուսուցիչ են փնտռում, գտնում նրան երբ առաջին օրը դասարան մտնում:

Ուսուցիչը գիտելիքներ, իմաստու-թիւն ուսուցանում: Որոնեւ «ճշմարտութիւն», մարդը հազար-հազար տարիներ փնտռել այն, դարձել մարդկային հասարակու-թեան մտածողութեան բարձրա-գոյն արժեքներից մէկը: Ուսուցիչ-ներ, «ճշմարտութեան» լոյսը լցնում աշակերտների հոգիների տաճարներ, իմաստութեան հրդեհ վարում այնտեղ, պեղում ամէն մի աշակերտի անգաստանները, ցոր-եանի հատիկների նման գիտելիք-ներ սերմում, գիտելիքներ, որոնց ամէն մի հատիկ հազար էր լինելու: Սպանեցին հայոց նախնիների՝ բա-րութեան, գեղեցկութեան, սիրոյ, լոյսի, յաղթանակի, ծաղիկի, ջրի, մանուկներին պատապարելու, իրենց երկրի ճանապարհներից անցնող-ներին օթեւանելու, դպրութեան վեհ գաղափարներ, նրանց որոնած ու գտած ճշմարտութիւն: Ուսու-ցիչներ գտե՞լ այն, աշակերտներին ուսուցանե՞լ այն: Մի Մարդ եկաւ աշխարհ, ես եմ՝ «ճշմարտութիւնը ու Կեանքը» քարոզեց, միլիոն-միլիոն մարդիկ քայլեցին նրա ճշմարտութեան ճանապարհով...: Մարդկային նոր հասարակարգ, մի ուսեալ ծիծաղում քահանայի դա-ւանած ճշմարտութեանը... Քահա-նան մի պահ լուռ մնացել, յետոյ ասել՝ «Դուք մարդկանց հոգիներ-ում մարեցիք ճշմարտութեան լոյ-սը... սակայն ինչ դրիք այնտեղ... պարապ մնացին նրանց հոգիներ-ը...»:

Պատահում է դպրոցներում առանձին աշակերտների միջեւ վէ-ճեր ու նոյնիսկ ձեռակոխներ լի-նէին: Ուսուցիչը նրանց վէճի պատ-ճառի ճշմարտութիւնը որոնում, խաղաղեցնում նրանց: Ռումիներ-ի հայ դպրոցի ուսուցչուհի դպրո-ցի կուսակցան մի աշակերտին խօս-քով հնարաւոր չէր եղել դարձի բերել, տուել նրան դպրոցի հասա-րակական կեանքի մի հսկողի դեր, նոր մարդ էր զգացել իրեն, ինչ որ արժանապատուութեան զգացում ծնել մտածողութեան հորիզոնում, ձգտել էր ճշմարտութեանը լուծել վէճեր, զարմացել էին, փոքրերն էլ

Շար.ը էջ 19

ՄԵՔ ԿԱՊԱՀՈՎԱԳՐԵՆՔ ՁԵՐ ԱՊԱԳԱՆ, ՈՐՊԵՏԱԳԻ ԴՈՒՔ ԿԵՆՏՐՈՆԱՆԱՔ ՆԵՐԿԱԻ ՎՐԱ

RESIDENT INSURANCE PRODUCER
Accident and Health Agent,
Casualty Broker-Agent, Life-Only
Agent, Property Broker-Agent

209 E. Alameda Ave., Suite 204
Burbank, CA 91502

**WE INSURE YOUR FUTURE,
SO YOU CAN FOCUS ON THE PRESENT**



KARAPET S. DEMIRCHYAN CA LICENSE: 0C74479
demkarsinc@sbcglobal.net (818) 913-2414

Կրթութեան Ձախակիր Արփի Աւանեսեանը

Շարունակուած էջ 15-էն

տնօրէնի նախաձեռնութեամբ հիմք դրուեց նաեւ մի գեղեցիկ աւանդուցի: Որոշուեց, որ ամէն տարի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում դպրոցականներն իրենց յարգանքն ու խոնարհումը պէտք է բերէին ՀՀ Ազգային հերոս, ՀԲԸՄ երկարամեայ նախագահ Ալեք Մանուկեանի եւ նրա տիկնոջ՝ Մարի Մանուկեանի, շիրիմներին: Հարկ է նշել, որ Հայաստան ուխտագնացութեան բաղկացուցիչ մասերից մէկն էլ Արագածի գագաթ բարձրանալն էր, ինչպէս նաեւ մեր լինելիութեան խորհրդանիշ Արցախ այցելելը:

Դպրոցի գիտակրթական նոր առաջընթացի մասին է վկայում 2019 թ.-ին ԱՄՆ Արեւմտեան շրջանի դպրոցների եւ քոլեճների հաւատարման ասոցիացիայի յանձնաժողովի (WASC) կողմից երկարամիջոց վկայագրի տրամադրումը: Ամենեւին էլ պատահական չէ, որ այսօր աշակերտների թիւը հասել է իր գագաթնակետին՝ արձանագրելով ամենաբարձր ցուցանիշն իր ողջ գոյութեան ընթացքում:

Մարդկութեանը վրայ հասած համավարակի առաջին իսկ օրերից, տիկին Աւանեսեանը՝ որպէս անձնուրաց ղեկավար, իր թիմով լծուեց աշխատանքի՝ դպրոցի մեծ ընտանիքը գերծ պահելով ցնցումներին: Անմիջապէս վերակազմաւորուեց կրթական գործընթացը՝ հաշուի առնելով բոլոր սաների անհատական հնարաւորութիւններն ու անվտանգութեան կանոնները: Կարճ ժամանակում առցանց ուսուցմանը զուգահեռ, դասարանները վերազինուեցին գերժամանակակից համակարգչային միջոցներով: Ուսուցիչներն արագ վերապատրաստուածից յետոյ, սկսեցին առկայ եւ հեռավար դասերի միաժամանակեայ կազմակերպում, որի արդիւնքում չտուժեց կրթական որակը, այլ այն հարստացաւ նոր մեթոդներով եւ հմտութիւններով: Կրթօճախը դարձաւ չափօրինակ, որի փորձը սկսեցին կիրառել հայ եւ օտար այլ հաստատութիւններ:

Արցախեան երկրորդ պատերազմի օրերին, տիկին Աւանեսեանի ղեկավարութեամբ եւ ուսուցչական կազմի մասնակցութեամբ, սկսուեց հայրենասիրական ոգին բարձրացնելու ձեռնարկներ, միջոցառումներ ու զրոյցներ, որի արդիւնքում հանգանակուած մի

քանի հարիւր հազար տղարի նուիրատուութիւններն ուղղուեցին հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին:

Տիկին Աւանեսեանը սերտօրէն համագործակցում է նաեւ ԱՄՆ Արեւմտեան թեմի Առաջնորդարանի հետ: Իր մանկավարժական ու մարդկային ներուժն օգտագործում է տարբեր ծրագրերի իրագործման համար: Յիշարժան է դպրոցի ակտիւ մասնակցութիւնն Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հովուապետական այցելութեան ժամանակ, ինչպէս նաեւ իր արժէքաւոր դասախօսութիւններն Առաջնորդարանի կողմից կազմակերպուող հայերէնի ուսուցիչներին ամենամեայ հաւաքներին:

Իր կատարած աշխատանքի մասին նա չի սիրում խօսել, այլ փոխարէն ամէն ինչ ապացուցում է գործով՝ միաժամանակ վառ պահելով մեր ազգային, վեհ ու անանց արժէքները: Իր համեստ ու ծառայասէր բնավորութեամբ նա անխտիր բոլոր աշակերտների եւ գործընկերների սիրելին է, բարեկամը եւ առաջին, անշահախնդիր օգնութեան ձեռք մեկնողը: Բոլորովին վերջերս, երբ յայտնի դարձաւ, որ աւարտական դասարանի աշակերտներից մէկը տառապում է չարաբաստիկ հիւանդութեամբ եւ մասնաւոր բուժման համար անհրաժեշտ են հսկայական միջոցներ, Արփի Աւանեսեանն անմիջապէս անցաւ գործի՝ հաշուած օրերի ընթացքում կազմակերպելով անհրաժեշտ հանգանակութիւնը, որը տուեց եւ շարունակում է տալ հրաշալի արդիւնքներ:

Պէտք է խոստովանել, որ սա Արփի Աւանեսեանի լուսաւոր իրագործումների մի աննշան մասն է, որի ակնատեսը եղանք մենք, իրականում դրանք աւելի շատ են ու զնալով պէտք է շատանան, որովհետեւ որպէս կրթական գործի կազմակերպիչ, նա միշտ ձգտում է կատարելութեան՝ հաւատալով իր առաքելութեանը եւ կոչմանը: Լիաջոյս ենք, որ նման վառ անհատականութիւնները, ինչպիսին տիկին Աւանեսեանն է, պիտի շարունակի փառք ու պատիւ բերել մեր համայնքին, ժողովրդին եւ, ի հարկէ, հայրենիքին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԳՈՒՄՐՈՒՅԵԱՆ
 ԱՄՆ Արեւմտեան թեմի Շաբաթօրեայ վարժարանների Հոգեւոր տեսուչ

Արմին-Յայերի Մի Քանի Բարոյացուիչ

Շարունակուած էջ 18-էն

զգացողութիւն ունեն, յարգիր այն:

Ռուսաստանից ուսուցիչներին մի խումբ եկել Հայաստան, պատշաժ ու ծախսատար հիւրասիրել էին նրանց: Վերադարձին նամակ էին գրել Կրթութեան Նախարարութիւն, որ իրենք էլ հաւասար աշխատավարձ ստանում, այդ նրանց որտեղից նման ճոխ հիւրասիրութիւն արել: Նրանք չէին իմացել, որ հայերի նախնիներ վանատուր աստուծոյ հիւրընկալութեան պաշտամունք ունեցել եւ որ նրա աւանդութիւնը հասել մինչեւ նոր օրեր, պահպանել են ճանապարհների անցողիկներին, երկիր եկած օտար մարդկանց հիւրասիրել, այսքան:

Իրենց երկիր այցելութեան եկած հովեկներին մի դպրոց հրաւիրել, նրանց ղեկավարը խոստովանել, որ իրենք ոչ բարձր ուսում ստացած, առեւտրի բնագաւառի մարդիկ էին եւ որ իրենց չնեղէին ընկերային ու քաղաքական նիւթերի շուրջ խօսակցութիւն վարելու: Հաւաքին, տարբեր ուսուցիչներ խօսել երկրի առաջդիմութեան ու ուսման մակարդակի մասին եւ որ աշակերտները դաստիարակում են սոցիալիստական գաղափարների ոգով: Խնդրել էին, որ իրենք էլ խօսք ասէին: Շնորհակալութիւն յայտնել հրաւիրի համար եւ որ իրենց մանչերին դաստիարակում՝ օգնիր ընկերոջդ, սուտ մի խօսիր, ընկած մարդուն բարձրացրու, մի հայտնի, գողութիւն մի ընէր՝ աստուած կը պատժէ քեզ... մեր տղաքը լաւ մարդիկ կը դառնան: Հեռատեսիլի երեսին կիսաբոլոր շարքով ոստանի դպրոցներից

ուսուցիչներ էին: Նման հանդիպումներ յաճախ էին լինում: Երկրում նոր հովեր էին անցնում, խօսքի մասնակի ազատութիւն էր: Մասնաւորապէս զրուցում դաստիարակչական նիւթերի շուրջ: Ձերժինակու անուան դպրոցի մի ուսուցիչ խօսք էր ասել մարդկային վարուելակերպի սկզբունքների շուրջ, իր դասաւանդած դասարանի աշակերտներին, թերթիկներ բաժանել, խնդրել գրաւոր իրենց կարծիքը յայտնել՝

Ինչու չես ուզում կոխ անել թերթիկները դասաւանդել էր ըստ պատասխանների՝

Կոխ չեմ ուզում անել, միլիցիայից վախենում եմ

Կոխ չեմ ուզում անել, վախենում եմ ծեծուեմ

Կոխ չեմ ուզում անել որ ուրիշին ցաւ չպատճառեմ

Քիչ էին այն աշակերտների թիւը, որոնք չէին ուզում կոխ անել, որիշին ցաւ չպատճառելու համար: Ազնիւ տղաներ, ո՞րտեղից ժառանգել էին մարդ կոչուելու այդ յատկանիշը՝ ուրիշին ցաւ չպատճառել: Նրանք չիրաւի ցաւ էին զգալու հայրենի հողի կորստեան, ցաւ նրա պաշտպանութեան ելած մարտիկների գոհուելուն,, ցաւ նախնիների այգիներում արեւի կորուստի շողերի մարման, ցաւ հայրենի հողի բոյրի ու նրա գարնանային քրտինքի գալար-գալար առ Աստուած բարձրանալու հեւքը մարելու, սիրելի ընթերցող ցաւաւորում եւ նախնիների փլած մեհեանների, տաճարների աւերմանը հողի կորստեանը: Նրան տիրած մարդիկ բողոքում են, որ Արտամետի խնձորենիները չեն պտղակալում...

Ստացուած Գիրքեր
«Յուշամատեան Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցւոյ»
(175ամեայ արեղարձին Առթիւ)

Աշխատասիրեց եւ խմբագրեցՎեր. Դոկտ. Վահան Յ. Թուրքիկեան

Շուրջ 208 էջերէ բաղկացած սոյն գիրքը՝ համառօտ պատմութիւնն է Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի: Գիրքը լոյս տեսած 2021-ին:



www.massisweekly.com

UNITED STATES POSTAL SERVICE® (All Periodicals Publications Except Requester Publications)		
1. Publication Title Massis Weekly	2. Publication Number 0 6 6 7 - 3 1 0	3. Filing Date 10-23-2021
4. Issue Frequency Weekly, Except two weeks in August	5. Number of Issues Published Annually	6. Annual Subscription Price \$50
7. Complete Mailing Address of Known Office of Publication (Not printer) (Street, city, county, state, and ZIP+4®) 1060 N Allen Ave, Pasadena, CA 91104		Contact Person Telephone (include area code) 626-797-7680
8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher (Not printer) 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104		
9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor (Do not leave blank) Publisher (Name and complete mailing address) Vahe Atchabahian 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104		
15. Extent and Nature of Circulation		
		Average No. Copies Each Issue During Preceding 12 Months
		No. Copies of Single Issue Published Nearest to Filing Date
a. Total Number of Copies (Net press run)		3,500
(1)	Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)	120
(2)	Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies)	360
(3)	Paid Distribution Outside the Mails Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS®	2400
(4)	Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g. First-Class Mail®)	60
c. Total Paid Distribution (Sum of 15b (1), (2), (3), and (4))		2940
(1)	Free or Nominal Rate Outside-County Copies included on PS Form 3541	40
(2)	Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541	35
(3)	Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g. First-Class Mail)	
(4)	Free or Nominal Rate Distribution Outside the Mail (Carriers or other means)	300
e. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 15d (1), (2), (3) and (4))		375
f. Total Distribution (Sum of 15c and 15e)		3315
g. Copies not Distributed (See Instructions to Publishers #4 (page #3))		185
h. Total (Sum of 15f and g)		3500
i. Percent Paid (15c divided by 15f times 100)		83%
16. Publication of Statement of Ownership		
<input type="checkbox"/> If the publication is a general publication, publication of this statement is required. Will be printed in the _ 10-23-2021 issue of this publication. <input type="checkbox"/> Publication not required.		

Այս խաղին Լաւագոյնն Էինք Դաշտին Կրայ. Մխիթարեան



Իտալական «Ռոմայի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը հիասթափուած է «Եռվենտուսի» դէմ կրած պարտութենէն:

«Այո, մենք հիասթափուած ենք «Եռվենտուսի» դէմ խաղի արդիւնքէն: Մենք այս խաղին լաւագոյնն էինք դաշտին վրայ: Մենք կարող էինք ընել աւելին կող խփելու եւ յաղթելու համար: Առաջընթաց ունինք եւ գիտենք, որ կը յաղթենք, եթէ շարունակենք նոյնութեամբ», - «Արմենիա» հաղորդմամբ ըսած է Մխիթարեան:

Իտալիոյ ֆուտպոլի առաջնութեան 8-րդ հանգրուանին «Ռոման» արտագնայ խաղին Թուրինի մէջ մրցեցաւ «Եռվենտուսի» հետ եւ պարտուեցաւ նուագագոյն արդիւնքով: Հանդիպման միակ կողմը 16-րդ վայրկեանին նշակեց Մոյսէ Բիւնը:

Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբի աւագ Հենրիխ Մխիթարեանը «Ռոմայի» հիմնական կազմին մէջ էր եւ մասնակցեցաւ ամբողջ խաղին: Այս հանգրուանէն յետոյ «Ռոման» Սերիա Ա-ի մրցաշարային աղիւսակին վրայ 4-րդն դիրքը կը գրաւէ:

«Նափոլի» 8-րդ Յաջորդական Յաղթանակը Ա Սերիայի Մէջ

«Նափոլի» շարունակեց յաղթական շարքը Իտալիոյ ընթացիկ առաջնութեան ընթացքին: Իտալացի Լուչանո Սպալետիի գլխաւորած խումբը արձանագրեց 8-րդ յաջորդական յաղթանակը:

8-րդ հանգրուանին «Նափոլին» ընդունեց «Թորինոյին» եւ յաղթանակ տարաւ 1:0 հաշուով: Միակ կողմը 81-րդ վայրկեանին նշանակեց նիւթերիացի յարձակող Վիկտոր Օսիմենը:

«Նապոլին» ունի 24 կէտ եւ 2 միաւոր առաջ է երկրորդ տեղը ընթացող «Միլանին»:

Իբրահիմովիչ. Դուք Կը Քալէք, Ես Կը Թռչիմ

Իտալական «Միլանի» 40-ամեայ շուքտացի յարձակող Զլատան Իբրահիմովիչը վնասուածքէն ապաքինուելէ յետոյ վերադարձած է խաղադաշտ: Իտալիոյ առաջնութեան 8-րդ հանգրուանին իտալացի Ստեֆանո Պիոլիի գլխաւորած խումբը 3:2 արդիւնքով յաղթանակ տարած էր «Վերոնայի» նկատմամբ:

Հանդիպումէն յետոյ Իբրահիմովիչը լուսանկար հրապարակած է Թուրինի վրայ՝ գրառելով. «Դուք կը քալէք, ես կը թռչիմ»:

Սեպտեմբերի 12-ին վնասուածք ստանալէն յետոյ Իբրահիմովիչը Հոկտեմբերի 16-ին ունեցաւ իր առաջին հանդիպումը՝ փոխարինման դուրս գալով 77-րդ վայրկեանին:



«Ռեալ» Կ'ուզէ Երկարածել Պայմանագիրը Բենգեմայի Հետ

Ֆրանսայի ֆուտպոլի ազգային խումբի յարձակող Կարիմ Բենգեման կ'երկարածէ պայմանագիրը «Ռեալի» հետ: Այս մասին կը գրեն սպանական թերթերը: «Արքայական ակումբի» ղեկավարութիւնը մտադիր է նոր պայմանագիր առաջարկել Բենգեմային, որ նախատեսուած կ'ըլլայ մինչեւ 2025 թուականը:

Այս կերպ «սերուցքայինները» կը փորձեն նաեւ խթանել ՊՍԺ-ի յարձակող Կիլիան Միսթրի տեղափոխութիւնը:

Կարիմ Բենգեման ընթացիկ մրցաշրջանին «Ռեալի» ի կազմով մասնակցած է 8 խաղի, դարձած է 9 կողի եւ 7 արդիւնաւէտ փոխանցման հեղինակ:



«Չելսի», «Մանչեսթըր Սիթի» Յաղթանակները «Մանչեսթըր Եունայթըտի» Պարտութիւնը

Club	MP	W	D	L	GF	GA	GD	Pts
1 Chelsea	8	6	1	1	16	3	13	19
2 Liverpool	8	5	3	0	22	6	16	18
3 Man City	8	5	2	1	16	3	13	17
4 Brighton	8	4	3	1	8	5	3	15
5 Tottenham	8	5	0	3	9	12	-3	15
6 Man United	8	4	2	2	16	10	6	14

Անգլիոյ առաջնութեան 8-րդ հանգրուանին Ախոյեաններու Լիգայի գաւթակիր Լոնտոնի «Չելսին» հիւրընկալուեցաւ «Պրենթֆորտի» դաշտին: Գերմանացի Թոմաս Տուխելի գլխաւորած խումբը նուագագոյն հաշուով յաղթանակ տարաւ անգլիացի պաշտպան Պեն Չիլուելի միակ կողմի շնորհիւ:

«Չելսի» 19 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: Մէկ միաւոր ետ է երկրորդ դիրքի վրայ ընթացող «Լիվերպուլը», որը 5:0 հաշուով պարտութեան մատնեց «Ուոլթֆլըտին»:

Ախոյեան «Մանչեսթըր Սիթին» փորձուցաւ կիսապաշտպան Պերնանդու Սիլվայի եւ պեյճիգացի կիսապաշտպան Կեւին դէ Բրոյնէի կողբուն շնորհիւ 2:0 արդիւնքով պարտութեան մատնեց «Պարնլին» եւ 17 կէտով երրորդ տեղը կը գրաւէ:

«Մանչեսթըր Եունայթըտը» հիւրընկալուեցաւ «Լեսթեր Սիթիին» եւ պարտութիւն կրեց 2:4 հաշուով:

Մանչեսթըրեան խումբի մեկնարկային կազմին մէջ էր փորձուցաւ յարձակող Կրիշտիանու Ռոնալդուն: «Մանչեսթըր Եունայթըտ» 14 միաւորով 5-րդն է: «Լեսթեր Սիթին» ունի 11 միաւոր եւ 11-րդն է:

ՊՍԺ-ի Յաղթանակը Սփապէի Կուլին Շնորհիւ

Ֆրանսայի առաջնութեան 10-րդ հանգրուանին ՊՍԺ-ն իր դաշտին վրայ մրցեցաւ «Անժէի» հետ: Փարիզեան խումբը յաղթանակի հասաւ 2:1 հաշուով:

Առաջինը կողմը նշանակեցին հիւրերը: Իտալացի Զանլուիջի Դոնարուսի պաշտպանած դարպասը 36-րդ վայրկեանին գրաւեց ֆրանսացի կիսապաշտպան Անթելո Ֆյուլթինին:

69-րդ վայրկեանին հաւասարութիւնը վերականգնեց փորձուցաւ յարձակող Կիլիան Միսթրի: Արժէնթինացի Մաուրիսիո Պոչետինոյի գլխաւորած խումբի յաղթական կողմը 87-րդ վայրկեանին 11 մեթրանոցէն նշանակեց աշխարհի ախոյեան եւ Ազգերու Լիգայի գաւթակիր Ֆրանսայի հաւաքականի յարձակող Կիլիան Միսթրին:

Հարաւամերկեան հաւաքականներուն մէջ Հոկտեմբերի 14-ին աշխարհի առաջնութեան ընտրական հանդիպումներուն մասնակցած ֆուտպոլիստները չէին ընդգրկուած ՊՍԺ-ի կազմին մէջ:

ՊՍԺ-ն 9 յաղթանակէն եւ 1 պարտութենէն յետոյ 25 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: «Անժէն» չորրորդն է՝ 16 միաւոր:



«Սելիլիան» Յաղթեց Եւ Հաւասարեցաւ «Ռեալին» Ու «Աթլետիքոյին»

Սպանիոյի առաջնութեան 9-րդ հանգրուանին «Սելիլիան» հիւրընկալուեցաւ «Սելտային»: Սպանացի Ուլեն Լոպետեգիի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ նուագագոյն հաշուով:

54-րդ վայրկեանին հիւրերու միակ կողմը նշանակեց սպանացի յարձակող Ռաֆայէլ Միրը:

«Սելիլիան» երրորդ տեղը կը գրաւէ 17 կէտով՝ հաւասարուելով Մատրիտի «Ռեալին» եւ ախոյեան «Աթլետիքոյին»:

«Պարսելոնայի» Յաղթանակը

Սպանիոյի առաջնութեան 9-րդ հանգրուանին «Պարսելոնան» իր դաշտին վրայ յաղթանակ տարաւ «Վալենսիայի» նկատմամբ:

Հիւրերը առաջինը հասան յաջողութեան սպանացի պաշտպան Սոսէ Լուիս Գալայի կողմի շնորհիւ՝ 5-րդ վայրկեանին:

13-րդ վայրկեանին հաւասարութիւնը վերականգնեց գաւթաւորական խումբի եւ Սպանիայի հաւաքականի յարձակող Անտու Ֆատին: 41-րդ վայրկեանին 11 մեթրանոցը արդիւնաւէտ իրականացուց հոլանտացի յարձակող Մեմֆիս Դեպայը, իսկ 85-րդ վայրկեանին «Պարսելոնայի» առաւելութիւնն ամրապնդեց պրագիւրացի կիսապաշտպան Ֆիլիպէ Կոուտինիոն: